ԱԽՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ախտաբանական ծառայությունում պարտադիր վարվող մատյաններ են բոլորը, ԲԱՑԻ՝
Ա- դիակների ընդունման և հանձնման մատյաններ
Բ- աշխատանքի և տեղեկատվական անվտանգության պահպանման մատյան
Գ- դիահերձման արձանագրության մատյան
Դ- կենսանյութի, վիրահատական նյութի, ընկերքի հյուսվածաբանական ցիտոլոգիական նյութի ուսումնասիրության գրանցման մատյան

2. Վիրահատական–բիոպսիոն նյութի հետազոտության համար ճիշտ են բոլորը, ԲԱՑԻ՝
Ա- ներվիրահատական կենսանյութի շտապ ուսումնասիրությունը տևում է 20-25 րոպե
Բ- պլանային վիրահատական նյութի հետազոտությունը տևում է 5-7 օր
Գ- Հետազոտության պատասխանը կցվում է հիվանդության պատմությանը
Դ- պլանային վիրահատական նյութի հետազոտությունը տևում է 2-3 օր

3. Ախտանիշները, դա՝
Ա- ներքին կապերով համակցված ախտանշանների յուրահատուկ համադրություն է
Բ- սիմպտոմների, սիմպտոմոկոմպլեքսի համակցված պատկերն է
Գ- կարող են լինել տեսանելի, նկատելի, ցայտուն կամ քողարկված
Դ- ոչ յուրահատուկ սիմպտոմների հասարակ գումարն է

4. Ախտանշահամալիրը (սիմպտոմոկոմպլեքսը) դա՝
Ա- ներքին կապերով համակցված ախտանշանների յուրահատուկ համադրություն է
Բ- սիմպտոմների, սիմպտոմոկոմպլեքսի համակցված պատկեր է
Գ- կարող է լինել տեսանելի, նկատելի, ցայտուն կամ քողարկված
Դ- ոչ յուրահատուկ սիմպտոմների հասարակ գումարն է

5. Համախտանիշը (սինդրոմը) դա՝
Ա- ներքին կապերով համակցված ախտանշանների յուրահատուկ համադրություն է
Բ- սիմպտոմների, սիմպտոմոկոմպլեքսի համակցված պատկեր է
Գ- կարող է լինել տեսանելի, նկատելի, ցայտուն կամ քողարկված
Դ- ոչ յուրահատուկ սիմպտոմների հասարակ գումարն է

6. Կլինիկական պատկերը դա՝
Ա- ներքին կապերով համակցված ախտանշանների յուրահատուկ համադրության պատկերն է
Բ- սիմպտոմների, սիմպտոմոկոմպլեքսի համակցված պատկեր է
Գ- կարող է լինել տեսանելի, նկատելի, ցայտուն և քողարկված
Դ- ոչ յուրահատուկ սիմպտոմների հասարակ գումարի պատկեր է

7. Լիարժեք ախտաբանաանատոմիական եզրակացությունը կարող է նպաստել հետևյալ գործառույթի՝
Ա- բնակչության մահացության վիճակագրության՝ համաձայն ՀՄԴ-ի դասակարգման

Բ- բռնի մահի մեխանիզմի հայտնաբերման
Գ- ախտաբանաանատոմիական ծառայության աշխատանքի բարելավման
Դ- հայտնաբերված ախտանշանների վերլուծության և գնահատման

8. Լիարժեք ախտաբանաանատոմիական եզրակացությունը կարող է նպաստել հետևյալ գործառույթի՝
Ա- հակահամաճարակային միջոցառումները ժամանակին կիրառելուն
Բ- բռնի մահի մեխանիզմի հայտնաբերման
Գ- ախտաբանաանատոմիական ծառայության աշխատանքի բարելավման
Դ- հայտնաբերված ախտանշանների վերլուծության և գնահատման

9. Լիարժեք ախտաբանաանատոմիական եզրակացությունը կարող է նպաստել հետևյալ գործառույթի՝
Ա- հիվանդի մահվան մեխանիզմի և մահվան պատճառի հայտնաբերման
Բ- բռնի մահի մեխանիզմի հայտնաբերման
Գ- ախտաբանաանատոմիական ծառայության աշխատանքի բարելավման
Դ- հայտնաբերված ախտանշանների վերլուծության և գնահատման

10. Ըստ ՀՄԴ դասակարգման «C» տառով կոդավորման մեջ մտնում են՝
Ա- աչքի և դրա հավելումների հիվանդությունները
Բ- շնչառական համակարգի հիվանդությունները
Գ- նորագոյացությունները
Դ- վարակային, վիրուսային, մակաբուծային հիվանդությունները

11. Ըստ ՀՄԴ դասակարգման «I» տառով կոդավորման մեջ մտնում են՝
Ա- արյան շրջանառության համակարգի հիվանդությունները
Բ- շնչառական համակարգի հիվանդությունները
Գ- նորագոյացությունները
Դ- վարակային, վիրուսային, մակաբուծային հիվանդությունները

12. Ըստ ՀՄԴ դասակարգման «N» տառով կոդավորման մեջ մտնում են՝
Ա- արյան շրջանառության համակարգի հիվանդություններ
Բ- շնչառական համակարգի հիվանդություններ
Գ- նորագոյացություններ
Դ- միզասեռական համակարգի հիվանդություններ

13. Հիմնական հիվանդությունը՝
Ա- նոզոլոգիական միավոր է
Բ- տվյալ ժամանակահատվածում չունի արտահայտված նշաններ
Գ- տվյալ ժամանակահատվածում չի սպառնում մարդու կյանքին
Դ- բարդացնում է հիվանդության ընթացքը

14. Հիմնական հիվանդությունը՝
Ա- տվյալ ժամանակահատվածում ունի առավել արտահայտված նշաններ
Բ- տվյալ ժամանակահատվածում չունի արտահայտված նշաններ

Գ- տվյալ ժամանակահատվածում չի սպառնում մարդու կյանքին
Դ- բարդացնում է հիվանդության ընթացքը

15. Հիմնական հիվանդությունը՝
Ա- սպառնում է մարդու առողջությանն ու կյանքին, որոնց պատճառով կատարվում է բուժում
Բ- տվյալ ժամանակահատվածում չունի արտահայտված նշաններ
Գ- տվյալ ժամանակահատվածում չի սպառնում մարդու կյանքին
Դ- բարդացնում է հիվանդության ընթացքը

16. Հիմնական հիվանդության բարդությունը՝
Ա- հաճախ հանդիսանում է մահվան ելքի պատճառ
Բ- կապված չէ հիմնական հիվանդության հետ
Գ- տվյալ ժամանակահատվածում չունի առավել արտահայտված նշաններ
Դ- բարդացնում է հիվանդության ընթացքը

17. Համակցված (կոմբինացված) հիմնական հիվանդությունները՝
Ա- երկու հիմնական հիվանդությունների համակցում է
Բ- հիվանդի միաժամանակ առկա հիվանդություններն են, որոնցից յուրաքանչյուրն առանձին կարող է բերել մահվան
Գ- նոզոլոգիական հիվանդություններ են, որոնք պատահական համընկնում են տեղի և ժամանակի մեջ
Դ- կարևոր դեր են կատարում հիմնական հիվանդության ծագման և զարգացման գործում

18. Մրցակցող հիվանդությունները՝
Ա- երկու հիմնական հիվանդությունների համակցում է
Բ- հիվանդի մոտ միաժամանակ առկա հիվանդություններն են, որոնցից յուրաքանչյուրն առանձին կարող է բերել մահվան
Գ- նոզոլոգիական հիվանդություններ են, որոնք պատահական համընկնում են տեղի և ժամանակի մեջ
Դ- կարևոր դեր են կատարում հիմնական հիվանդության ծագման և զարգացման գործում, չնայած պատճառագիտությունը տարբեր է

19. Զուգակցված հիվանդությունները՝
Ա- երկու հիմնական հիվանդությունների համակցում է
Բ- հիվանդի միաժամանակ առկա հիվանդություններն են, որոնցից յուրաքանչյուրն առանձին կարող է բերել մահվան
Գ- նոզոլոգիական հիվանդություններ են, որոնք պատահական համընկնում են տեղի և ժամանակի մեջ
Դ- կարևոր դեր են կատարում հիմնական հիվանդության ծագման և զարգացման գործում, չնայած պատճառագիտությունը տարբեր է

20. Ֆոնային հիվանդությունը՝

Ա- երկու հիմնական հիվանդությունների համակցում է
Բ- հիվանդի միաժամանակ առկա հիվանդություններն են, որոնցից յուրաքանչյուրն առանձին կարող է բերել մահվան
Գ- նոզոլոգիական հիվանդություններ են, որոնք պատահական համընկնում են տեղի և ժամանակի մեջ
Դ- կարևոր դեր են կատարում հիմնական հիվանդության ծագման և զարգացման գործում, չնայած պատճառագիտությունը տարբեր է

21. Յատրոգեն հիվանդությունների մեջ մտնում են՝
Ա- բժշկական միջամտության ժամանակ սպասելի վնասումները
Բ- դեղերի ոչ ճիշտ կամ անկանոն օգտագործումը
Գ- թերապևտիկ բուժման կամ վիրաբուժական միջամտությունների հետևանքով առաջացած բարդությունները և առողջությանը դիտավորությամբ հասցված վնասը
Դ- թերապևտիկ դեղեր ընդունելիս հիվանդի կողմից ինքնակամ չափաքանակի բարձրացում կամ նվազեցում, անբարենպաստ ռեակցիաների առաջացումով

22. Յատրոգեն հիվանդությունների մեջ մտնում են՝
Ա- դեղերի պատահական գերդոզավորումը, ոչ ճիշտ նշանակումը
Բ- դեղերի ոչ ճիշտ կամ անկանոն օգտագործումը
Գ- թերապևտիկ բուժման կամ վիրաբուժական միջամտությունների հետևանքով առաջացած բարդությունները և առողջությանը դիտավորությամբ հասցված վնասը
Դ- թերապևտիկ դեղեր ընդունելիս հիվանդի կողմից ինքնակամ չափաքանակի բարձրացում կամ նվազեցում, անբարենպաստ ռեակցիաների առաջացումով

23. Յատրոգեն հիվանդությունների մեջ մտնում են՝
Ա- թերապևտիկ և վիրաբուժական միջամտությունների հետևանքով առաջացած բարդությունը
Բ- դեղերի ոչ ճիշտ կամ անկանոն օգտագործումը
Գ- թերապևտիկ բուժման կամ վիրաբուժական միջամտությունների հետևանքով առաջացած բարդությունները և առողջությանը դիտավորությամբ հասցված վնասը
Դ- թերապևտիկ դեղեր ընդունելիս հիվանդի կողմից ինքնակամ չափաքանակի բարձրացում կամ նվազեցում, անբարենպաստ ռեակցիաների առաջացումով

24. Յատրոգեն հիվանդությունների մեջ մտնում են՝
Ա- թերապևտիկ չափաքանակով դեղեր ընդունելիս անբարենպաստ ռեակցիաների առաջացումը
Բ- դեղերի ոչ ճիշտ կամ անկանոն օգտագործումը
Գ- թերապևտիկ բուժման կամ վիրաբուժական միջամտությունների հետևանքով առաջացած բարդությունները և առողջությանը դիտավորությամբ հասցված վնասը
Դ- թերապևտիկ դեղեր ընդունելիս հիվանդի կողմից ինքնակամ չափաքանակի բարձրացում կամ նվազեցում, անբարենպաստ ռեակցիաների առաջացումով

25. Ինցիզիոն բիոպսիայի համար ճիշտ է՝
Ա- նյութը վերցվում է հատուկ ասեղների, տրոակարների միջոցով

Բ- բաց բիոպսիա է, երբ կենսանյութը վերցվում է կտրվածքի միջոցով՝ վիրաբուժական ճանապարհով
Գ- երբ պաթոլոգիական օջախը հեռացվում է լրիվ, ուռուցքի դեպքում ամբողջությամբ՝ առողջ և փոփոխված հյուսվածքների սահմաններում
Դ- կատարվում է հատուկ ներարկիչներով կամ գործիքներով հիմնական խոռոչներից, իսկ երբեմն պարենքիմատոզ օրգաններից

26. Ընդծծական բիոպսիայի համար ճիշտ է՝
Ա- նյութը վերցվում է հատուկ ասեղների, տրոակարների միջոցով
Բ- բաց բիոպսիա է, երբ կենսանյութը վերցվում է կտրվածքի միջոցով վիրաբուժական ճանապարհով
Գ- երբ պաթոլոգիական օջախը հեռացվում է լրիվ, ուռուցքի դեպքում ամբողջությամբ՝ առողջ և փոփոխված հյուսվածքների սահմաններում
Դ- կատարվում է հատուկ ներարկիչներով կամ գործիքներով հիմնական խոռոչներից, իսկ երբեմն պարենքիմատոզ օրգաններից

27. Պունկցիոն բիոպսիայի համար ճիշտ է՝
Ա- նյութը վերցվում է հատուկ ասեղների, տրոակարների միջոցով
Բ- բաց բիոպսիա է, երբ կենսանյութը վերցվում է կտրվածքի միջոցով վիրաբուժական ճանապարհով
Գ- երբ պաթոլոգիական օջախը հեռացվում է լրիվ, ուռուցքի դեպքում ամբողջությամբ ՝ առողջ և փոփոխված հյուսվածքների սահմաններում
Դ- կատարվում է հատուկ ներարկիչներով կամ գործիքներով հիմնական խոռոչներից, իսկ երբեմն պարենքիմատոզ օրգաններից

28. Էքսցիզիոն բիոպսիա՝
Ա- նյութը վերցվում է հատուկ ասեղների, տրոակարների միջոցով
Բ- բաց բիոպսիա է, երբ կենսանյութը վերցվում է կտրվածքի միջոցով վիրաբուժական ճանապարհով
Գ- երբ պաթոլոգիական օջախը հեռացվում է լրիվ, ուռուցքի դեպքում ամբողջությամբ՝ առողջ և փոփոխված հյուսվածքների սահմաններում
Դ- կատարվում է հատուկ ներարկիչներով կամ գործիքներով հիմնական խոռոչներից, իսկ երբեմն պարենքիմատոզ օրգաններից

29. Վիրահատական նյութը ուղարկվում է հյուսվածաբանական լաբորատորիա բժշկի կողմից գրված ուղեգրով, որի վրա պարտադիր նշվում է՝
Ա- նյութի կտորների քանակը, բնույթը, համարակալումը
Բ- վերջնական կլինիկական ախտորոշումը
Գ- ամուսնական կարգավիճակը
Դ- անվճար բուժ. սպասարկում ստանալու հիմունքները

30. Վիրահատական նյութը ուղարկվում է հյուսվածաբանական լաբորատորիա բժշկի կողմից գրված ուղեգրով, որի վրա պարտադիր նշվում է՝
Ա- նյութը ուղեգրող հիմնարկի, բաժանմունքի անվանումը

Բ- վերջնական կլինիկական ախտորոշումը
Գ- ամուսնական կարգավիճակը
Դ- անվճար բուժ. սպասարկում ստանալու հիմունքները

31. Վիրահատական նյութը ուղարկվում է հյուսվածաբանական լաբորատորիա բժշկի կողմից գրված ուղեգրով, որի վրա պարտադիր նշվում է՝
Ա- հիվանդի անուն ազգանունը
Բ- վերջնական կլինիկական ախտորոշումը
Գ- ամուսնական կարգավիճակը
Դ- անվճար բուժսպասարկում ստանալու հիմունքները

32. Վիրահատական նյութը ուղարկվում է հյուսվածաբանական լաբորատորիա բժշկի կողմից գրված ուղեգրով, որի վրա նշվում են բոլորը, ԲԱՑԻ՝
Ա- նյութի վերցնելու ճիշտ ժամկետը
Բ- հիվանդի անուն ազգանուն հայրանուն, հեռախոսի համար, ստորագրություն
Գ- բժշկի անուն ազգանուն հայրանուն, հեռախոսահամար, ստորագրություն
Դ- կլինիկական տվյալներ, որոնք կօգնեն հյուսվածաբանական ախտորոշման

33. Լաբորատոր աշխատանքի համար ճիշտ են բոլոր պնդումները, ԲԱՑԻ՝
Ա- վիրահատական նյութը ֆիքսվում է 10% ֆորմալինով
Բ- պլանային վիրահատական նյութի պատասխանը տրվում է 5-7 օրվա ընթացքում
Գ- փչացած, նեխած, սառեցված նյութը պետք է անպայման հետազոտել հատուկ մեթոդով
Դ- նյութն ընդունելիս պետք է ստուգել նյութի և ուղեգրի համապատասխանությունը

34. Վիրահատական նյութի և կենսանյութի ախտաբանաանատոմիական եզրակացությունները կարող են լինել բոլորը, ԲԱՑԻ՝
Ա- նկարագրական
Բ- վերջնական
Գ- ոչ լիարժեք
Դ- կողմնորոշիչ

35. Ախտաբանաանատոմիական հետազոտությունների արդյունքները բժշկական գաղտնիք են, եզակի դեպքերում դրանք կարելի է փոխանցել երրորդ անձանց՝
Ա- անչափահասների դեպքում՝ ծնողներին հանձնելու համար
Բ- մոտիկ հարազատին՝ հիվանդի հետագա հետազոտման և բուժման կազմակերպելու համար, հիվանդի կամքին հակառակ
Գ- զանգվածային լրատվության միջոցներին, վերջիններիս պահանջի դեպքում
Դ- հեռախոսային զանգի միջոցով

36. Ախտաբանաանատոմիական հետազոտությունների արդյունքները բժշկական գաղտնիք են, եզակի դեպքերում դրանք կարելի է փոխանցել երրորդ անձանց.
Ա- բժիշկներին՝ քաղաքացու հետազոտման և բուժման համար, եթե հիվանդը ի վիճակի չէ արտահայտել իր կամքը

Բ- մոտիկ հարազատին՝ հիվանդի հետագա հետազոտման և բուժման կազմակերպելու համար, հիվանդի կամքին հակառակ
Գ- զանգվածային լրատվության միջոցներին, վերջիններիս պահանջի դեպքում
Դ- հեռախոսային զանգի միջոցով

37. Ախտաբանաանատոմիական հետազոտությունների արդյունքները բժշկական գաղտնիք են, եզակի դեպքերում դրանք կարելի է փոխանցել երրորդ անձանց՝
Ա- վարակիչ հիվանդությունների տարածման վտանգի դեպքերում
Բ- մոտիկ հարազատին՝ հիվանդի հետագա հետազոտման և բուժման կազմակերպելու համար, հիվանդի կամքին հակառակ
Գ- զանգվածային լրատվության միջոցներին, վերջիններիս պահանջի դեպքում
Դ- հեռախոսային զանգի միջոցով

38. Ախտաբանաանատոմիական հետազոտությունների արդյունքները բժշկական գաղտնիք են, եզակի դեպքերում դրանք կարելի է փոխանցել երրորդ անձանց՝
Ա- քննչական մարմիններին և դատարանին, դատական գործերի հարուցման դեպքերում
Բ- մոտիկ հարազատին՝ հիվանդի հետագա հետազոտման և բուժման կազմակերպելու համար, հիվանդի կամքին հակառակ
Գ- զանգվածային լրատվության միջոցներին, վերջիններիս պահանջի դեպքում
Դ- հեռախոսային զանգի միջոցով

39. Դիակը պարտադիր ենթարկվում է դատաբժշկական փորձաքննության՝
Ա- եթե պաթանատոմիական դիահերձման ժամանակ հայտնաբերվում են բռնի մահվան նշաններ
Բ- վարակիչ հիվանդությունների առկայության դեպքերում
Գ- հիվանդանոցային պայմաններում գրանցված մահվան բոլոր դեպքերում
Դ- թերապևտիկ բուժման կամ վիրաբուժական միջամտությունների հետևանքով առաջացած բարդությունների դեպքում

40. Դիակը պարտադիր ենթարկվում է դատաբժշկական փորձաքննության
Ա- էկոլոգիական աղետների հետևանքով առաջացած մահի դեպքում
Բ- վարակիչ հիվանդությունների առկայության դեպքերում
Գ- հիվանդանոցային պայմաններում գրանցված մահվան բոլոր դեպքերում
Դ- թերապևտիկ բուժման կամ վիրաբուժական միջամտությունների հետևանքով առաջացած բարդությունների դեպքում

41. Դիակը պարտադիր ենթարկվում է դատաբժշկական փորձաքննության՝
Ա- դեղերի գերդոզավորման կամ թունավորման կասկածի դեպքում
Բ- վարակիչ հիվանդությունների առկայության դեպքերում
Գ- հիվանդանոցային պայմաններում գրանցված մահվան բոլոր դեպքերում
Դ- թերապևտիկ բուժման կամ վիրաբուժական միջամտությունների հետևանքով առաջացած բարդությունների դեպքում

42. Դիակը տեղափոխվում է դատաբժշկական փորձաքննության բոլոր դեպքերում, ԲԱՑԻ՝
Ա- հղիների, ծննդկանի մահվան դեպքում
Բ- կլինիկական հիվանդանոցում մահը գրանցվելու դեպքում
Գ- էկոլոգիական աղետների դեպքում
Դ- հանկարծամահության դեպքում

43. Ըստ ՀՄԴ դասակարգման «J» տառով կոդավորման մեջ մտնում են՝
Ա- աչքի և դրա հավելումների հիվանդությունները
Բ- նորագոյացությունները
Գ- շնչառական համակարգի հիվանդությունները
Դ- սիրտ-անոթային համակարգի հիվանդությունները

44. Ըստ ՀՄԴ դասակարգման «K» տառով կոդավորման մեջ մտնում են՝
Ա- աչքի և դրա հավելումների հիվանդությունները
Բ- նորագոյացությունները
Գ- մարսողական համակարգի հիվանդությունները և սիրտ-անոթային համակարգի հիվանդությունները
Դ- սիրտ-անոթային համակարգի հիվանդությունները

45. Ըստ ՀՄԴ դասակարգման «E» տառով կոդավորման մեջ մտնում են՝
Ա- աչքի և դրա հավելումների հիվանդությունները
Բ- նորագոյացությունները
Գ- ներզատական համակարգի հիվանդությունները, սնուցման և նյութափոխանակության խանգարումները և սիրտ-անոթային համակարգի հիվանդությունները
Դ- սիրտ-անոթային համակարգի հիվանդությունները

46. Ըստ ՀՄԴ դասակարգման «D» տառով կոդավորման մեջ մտնում են՝
Ա- աչքի և դրա հավելումների հիվանդությունները
Բ- նորագոյացությունները
Գ- արյան և արյունաստեղծ օրգանների հիվանդությունների և իմուն մեխանիզմների խանգարման հետևանքով վիճակները
Դ- ներզատական օրգանների հիվանդությունները

47. Ըստ ՀՄԴ դասակարգման «A» տառով կոդավորման մեջ մտնում են՝
Ա- աչքի և դրա հավելումների հիվանդությունները
Բ- նորագոյացությունները
Գ- վարակային, վիրուսային, մակաբուծային հիվանդությունները, վիճակները
Դ- հեմոբլաստոզները

48. Ըստ ՀՄԴ դասակարգման «L» տառով կոդավորման մեջ մտնում են՝
Ա- աչքի և դրա հավելումների հիվանդությունները
Բ- նորագոյացությունները

Գ- մաշկի և ենթամաշկի բջջանքի հիվանդությունները
Դ- ներզատական համակարգի հիվանդությունները, սնուցման և նյութափոխանակության խանգարումները և սիրտ-անոթային համակարգի հիվանդությունները

49. Միջբջջային նյութի կառուցվածքային փոփոխությունները հիմնականում պայմանավորված են՝
Ա- կոլագենի կազմալուծմամբ
Բ- ռետիկուլային թելերի ավելացումով
Գ- էլաստինային թելերի ավելացումով
Դ- ամորֆ նյութի քանակի նվազմամբ

50. Ո՞ր հիվանդությունն է պայմանավորված կոլագենի ախտաբանությամբ.
Ա- Գուդպասչերի համախտանիշ
Բ- Բադդ Կիարի համախտանիշ
Գ- Գունակային քսերոդերմիա
Դ- Ֆանկոնիի սակավարյունություն

51. Ընտրել ճիշտ պնդումը.
Ա- վնասումը կարող է դրսևորվել և լետալ և ոչ լետալ ձևերով
Բ- ալտերացիան տարբեր գործոնների ազդեցությամբ միայն բջջում տեղի ունեցող փոփոխություն է
Գ- բջջի վնասումը պայմանավորված է միայն օրգանիզմի ռեակտիվականությամբ
Դ- վնասման հետևանքով բջիջը պարտադիր մահանում է

52. Կորիզում հայտնաբերվող ներառուկները կարող են լինել՝
Ա- վիրուսային
Բ- կորիզակային ցիտոպլազմատիկ
Գ- ճարպային
Դ- լիզոսոմային

53. Բջջաթաղանթի պաթոլոգիան պայմանավորված է.
Ա- միջբջջային կապերի խախտմամբ
Բ- կորիզային ներառուկներով
Գ- ակատալազեմիայով
Դ- ախտաբանական միտոզով

54. ԴՆԹ-ի ռեպարացիայի հիվանդություն է.
Ա- Ֆանկոնիի անեմիան
Բ- Գուդպասչերի համախտանիշը
Գ- Ալպորտի համախտանիշը
Դ- Ուոտերհաուս-Ֆրիդրիքսենի համախտանիշը

55. Կորիզային ներառուկները լինում են հետևյալ տեսակների, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- թաղանթային

Բ- կորիզային ցիտոպլազմատիկ
Գ- վիրուսային
Դ- իսկական կորիզային

56. Վնասման տեսակներին բնորոշ են բոլորը, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- ապոպտոզը դարձելի գործընթաց է
Բ- նեկրոզը անդարձելի գործընթաց է
Գ- դիստրոֆիան և նեկրոզը կարող են լինել հաջորդական փուլեր
Դ- դիստրոֆիան բջջի դարձելի վնասում է

57. Ստորև բերված բոլորը սպիտակուցային դիստրոֆիաներ են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- Սուդանոֆիլ կաթիլներ նեֆրոցիտներում
Բ- Մալորիի մարմնիկներ հեպատոցիտներում
Գ- Ճարպային փայծաղ
Դ- Լեյկոպլակիա

58. Ստորև բերվածներից ընտրել նուկլեոպրոտեիդների փոխանակության խանգարման տեսակ.
Ա- Պոդագրա
Բ- Պիգմենտային քսերոդերմա
Գ- Երիկամի սեպաձև ինֆարկտ
Դ- Լիպոֆուսցինոզ

59. Ստորև բերվածներից ընտրել կալցիումի փոխանակության խանգարման օրինակ.
Ա- Դիստրոֆիկ
Բ- Ապոպտոտիկ
Գ- Նեկրոտիկ
Դ- Բնածին

60. Ստորև բերվածներից ընտրել պոդագրային բնորոշ դրույթ.
Ա- Նուկլեոպրոտեիդների փոխանակության խանգարման դրսևորում է
Բ- Կարող է առաջանալ մակերիկամների տուբերկուլոզի դեպքում
Գ- Պարենքիմատոզ դիսպրոտեինոզ է
Դ- Ռևմատիկ բնույթի հոդաբորբ է

61. Ստորև բերված որ ախտաբանությանն է բնորոշ մետաստատիկ կրակալումը.
Ա- Միելոմային հիվանդությանը
Բ- Ստամոքսի խոցին
Գ- Թոքի տուբերկուլոզին
Դ- Աորտայի աթերոսկլերոզին

62. Ստորև բերվածներից ընտրել նուկլեոպրոտեիդների փոխանակության խանգարման տեսակ.
Ա- Միզաթթվային ինֆարկտ
Բ- Երակային գերարյունություն

Գ- Երիկամի սեպաձև ինֆարկտ
Դ- Ադիսոնյան հիվանդություն

63. Ստորև բերվածներից ընտրել կալցիումի փոխանակության խանգարման տեսակ.
Ա- մետաստատիկ
Բ- բնածին
Գ- առաջնային
Դ- իդիոպաթիկ

64. Նշվածները կալցիումի փոխանակության խանգարումներ են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- իդիոպաթիկ
Բ- մետաստատիկ
Գ- մետաբոլիկ
Դ- դիստրոֆիկ

65. Նշվածները նուկլեոպրոտեիդների փոխանակության խանգարման օրինակ են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- Երիկամի սեպաձև ինֆարկտ
Բ- Միզաքարային հիվանդություն
Գ- Պոդագրա
Դ- Միզաթթվային ինֆարկտ

66. Նշվածները մետաստատիկ կրակալման հնարավոր տեղակայումներ են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- աթերոսկլերոտիկ վահանիկ
Բ- երիկամներ
Գ- սրտամկան
Դ- թոքեր

67. Ստորև բերվածներից ընտրել տեղային հիպերմելանոզի օրինակ.
Ա- Հաստ աղու մելանոզ
Բ- Պիգմենտային քսերոդերմա
Գ- Մելանոդերմիա՝ ադիսոնյան հիվանդության դեպքում
Դ- Լեյկոդերմա

68. Ստորև բերվածներից ընտրել տեղային հիպերմելանոզի օրինակ.
Ա- Խալեր
Բ- Վիտիլիգո
Գ- Մելանոդերմիա՝ ադիսոնյան հիվանդության դեպքում
Դ- Ալբինիզմ

69. Ստորև բերվածներից ընտրել ընդհանուր հիպերմելանոզի օրինակ.
Ա- Մելանոդերմիա ադիսոնյան հիվանդության դեպքում
Բ- Վիտիլիգո
Գ- Հաստ աղու մելանոզ

Դ- Նևուս

70. Ո՞ր գունակն է հայտնաբերվում կարդիոմիոցիտներում սրտի ապաճման դեպքում.
Ա- լիպոֆուսցին
Բ- մելանին
Գ- պորֆիրին
Դ- հեմոսիդերին

71. Ստորև բերվածներից ընտրել լիպիդոգեն գունակ.
Ա- ցերոիդ
Բ- մելանին
Գ- պորֆիրին
Դ- հեմոսիդերին

72. Ստորև բերվածներից ընտրել պրոտեինոգեն գունակ.
Ա- ադրենոքրոմ
Բ- հեմոմելանին
Գ- պորֆիրին
Դ- հեմոսիդերին

73. Նշվածները մելանինի փոխանակության խանգարումներ են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- Հեմոքրոմատոզ
Բ- Վիտիլիգո
Գ- Ալբինիզմ
Դ- Գունակային քսերոդերմա

74. Նշվածները լիպիդոգեն գունակներ են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- Պորֆիրին
Բ- Լիպոքրոմ
Գ- Լիպոֆուսցին
Դ- Ցերոիդ

75. Նշվածները պրոտեինոգեն գունակներ են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- բիլիռուբին
Բ- մելանին
Գ- ադրենոքրոմ
Դ- էնտերոքրոմաֆինային բջիջների պիգմենտ

76. Ընտրել ճշմարիտ բնորոշում խառը դիստրոֆիաների համար.
Ա- բարդ սպիտակուցների և հանքային աղերի փոխանակության խանգարումներ՝ օրգանի հենքում և պարենքիմում
Բ- նյութափոխանակության խանգարումներ՝ օրգանի հենքում
Գ- ճարպերի և սպիտակուցների փոխանակության խանգարումներ՝ օրգանի պարենքիմայում

Դ- հիմնականում գլիկոպրոտեիդների և բազմաշաքարների փոխանակության խանգարումներ են

77. Ընտրել հեմոգլոբինոգեն պիգմենտները.
Ա- հեմոսիդերին
Բ- ադրենոքրոմ
Գ- լիպոֆուսցին
Դ- մելանին

78. Նշվածներից որն է բնորոշում տեղային հեմոսիդերոզին.
Ա- Առաջանում է արյունազեղումների օջախում
Բ- Պատճառը ներանոթային հեմոլիզն է
Գ- Հայտնաբերվում է օսմիական թթվով ներկելիս
Դ- Առաջանում է մալարիայի դեպքում

79. Նշվածներից որն է բնորոշում հեմին գունակին.
Ա- Հայտնաբերվում է ստամոքսի խոցի հատակում
Բ- Քիչ քանակով հանդիպում է նորմայում
Գ- Թիրոզինոգեն գունակ է
Դ- Երկաթ չի պարունակում

80. Նշվածներից որն է բնորոշում հեմատոիդին գունակին.
Ա- Երկաթ չի պարունակում
Բ- Հանդիպում է նորմայում
Գ- Առաջանում է թթու ֆորմալինի ազդեցությամբ
Դ- Հայտնաբերվում է Պեռլսի ռեակցիայով

81. Նշվածներից որն է բնորոշում հեմոմելանին գունակին.
Ա- Առաջանում է մալարիայի պլազմոդիումի ազդեցությամբ
Բ- Պատճառը ռեզուս կոնֆլիկտն է
Գ- Թիրոզինոգեն գունակ է
Դ- Մելանինի անտագոնիստն է

82. Նշվածները հեմոգլոբինոգեն պիգմենտներ են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- հեմոֆուսցին
Բ- ֆերիտին
Գ- բիլիռուբին
Դ- հեմատոիդին

83. Նշվածները բնորոշում են հեմոսիդերին գունակին, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- Առաջանում է հին հեմատոմաներում
Բ- Կլանվում է սիդերոֆագերի կողմից
Գ- Հայտնաբերվում բեռլինյան լազուրով ներկելիս
Դ- Հայտնաբերվում է թոքերում՝ կանգային գերարյունության պայմաններում

84. Ստորև բերված դրույթները ճշմարիտ են հեմոլիտիկ դեղնուկի համար,
Ա- Հանդիպում է սուր և քրոնիկական հեպատիտների դեպքում
Բ- Միաժամանակ հայտնաբերվում է ընդհանուր հեմոսիդերոզ
Գ- Պատճառը էրիթրոցիտների ուժեղացած քայքայումն է
Դ- Հանդիպում է մալարիայի դեպքում

85. Ստորև բերվածներից ընտրել ճարպային անոթահենքային դիստրոֆիան.
Ա- Աորտայի աթերոսկլերոզ
Բ- Վագրի սիրտ
Գ- Երիկամների ամիլոիդոզ
Դ- Ճարպային փայծաղ

86. Ընտրել ճարպային անոթահենքային դիստրոֆիայի արտահայտությունը
Ա- Աորտայի պատում խոլեստերինի կուտակումներ
Բ- Կարդիոմիոցիտներում ճարպային փոշեհատիկների կուտակումներ
Գ- Լիպոֆուսցինի կուտակումը հեպատոցիտներում
Դ- Փայծաղի ֆոլիկուլներում ամիլոիդի կուտակումներ

87. Ճարպային անոթահենքային դիստրոֆիայի արտահայտություն է.
Ա- Ադիպոցիտների հայտնաբերումը կարդիոմիոցիտների շուրջ
Բ- Կարդիոմիոցիտներում ճարպային փոշեհատիկների կուտակումներ
Գ- Լիպոֆուսցինի կուտակումը հեպատոցիտներում
Դ- Լիպոքրոմի հայտնաբերում ենթամաշկային ճարպաբջջանքում

88. Ընտրել ճշմարիտ դրույթ երկրորդային ճարպակալման համար.
Ա- Կարող է լինել իդիոպաթիկ և երկրորդային
Բ- Հիպերպլաստիկ ճարպակալումն իր բնույթով չարորակ է
Գ- Վակատային ճարպակալումը տարածուն է
Դ- Ժառանգական ճարպակալումը առաջնային է

89. Ընտրել սրտում ճարպային անոթահենքային դիստրոֆիայի արտահայտությունը
Ա- Ճարպի կուտակում ենթաէպիկարդային կարդիոմիոցիտների շուրջ
Բ- Ճարպի փոշեհատիկային կուտակումներ ենթաէնդոկարդային կարդիոմիոցիտներում
Գ- Կորոնար զարկերակների գալարաձև դասավորում
Դ- Լիպոֆուսցինի կուտակումը կարդիոմիոցիտներում

90. Ընտրել ճշմարիտ դրույթ տեղային անոթահենքային ճարպակալման համար
Ա- Վակատային ճարպակալումը երիկամի ատրոֆիայի դեպքում
Բ- Ճարպակալում Իցենկո Կուշինգի սինդրոմի դեպքում
Գ- Կարող է լինել իդիոպաթիկ և երկրորդային
Դ- Վագրի սիրտ

91. Նշվածները բնորոշում են անոթահենքային ճարպային դիստրոֆիան, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝

Ա- Վագրի սիրտ
Բ- Վակատային ճարպակալումը երիկամի ատրոֆիայի դեպքում
Գ- Կարող է լինել իդիոպաթիկ և երկրորդային
Դ- Ճարպակալում Իցենկո Կուշինգի սինդրոմի դեպքում

92. Նշվածները բնորոշ են ճարպակալմանը, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- Կարդիոմիոցիտներում առաջանում են ճարպային փոշեհատիկների կուտակումներ
Բ- Ճարպի կուտակում ենթաէպիկարդային կարդիոմիոցիտների շուրջ
Գ- Կարող է լինել երկրորդային՝ ալիմենտար բնույթի
Դ- Կարող է լինել երկրորդային՝ ժառանգական բնույթի

93. Նշված բոլոր դեպքերում առաջանում է երկրորդային ճարպակալում, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- իդիոպաթիկ
Բ- ալիմենտար
Գ- ժառանգական
Դ- գլխուղեղային

94. Նշվածներից որն է սպիտակուցային անոթահենքային դիստրոֆիա.
Ա- հիալինոզ
Բ- իխթիոզ
Գ- մելանոդերմա
Դ- հեմոքրոմատոզ

95. Ստորև բերվածներից ընտրել մուկոիդ ուռճեցմանը բնորոշ դրույթ.
Ա- Հեմատոքսիլինով և էոզինով ներկվում է բազոֆիլ
Բ- Անդարձելի գործընթաց է
Գ- Հեմատոքսիլինով և էոզինով դրսևորվում է մետաքրոմազիայի ֆենոմեն
Դ- Հյուսվածքում ձևավորվում են լորձային այտուցներ

96. Նշված որ դրույթն է բնորոշ պարզ անոթային հիալինին.
Ա- Առաջանում է արյան պլազմայի չփոփոխված կամ քիչ փոփոխված սպիտակուցներից
Բ- Պարունակում է լիպիդներ և լիպոպրոտեիդներ
Գ- Բնորոշ է ռևմատիկ հիվանդություններին
Դ- Կազմված է իմուն համալիրներից

97. Ընտրել ֆիբրինոիդ ուռճեցմանը բնորոշ արտահայտությունը.
Ա- ելքում կարող է զարգանալ մեռուկ
Բ- մակերեսային և դարձելի գործընթաց է
Գ- աղավաղված սինթեզի արդյունքում առաջացող բարդ սպիտակուց է
Դ- տեղակայվում է օրգանի պարենքիմում

98. Նշվածներից ընտրել հիալինոզին բնորոշ դրույթ.
Ա- Անոթի պատը կարծրանում է
Բ- Հիալինակաթիլային դիստրոֆիայի ելքն է

Գ- Աղավաղված սինթեզի արդյունք է
Դ- Պարզ հիալինի կազմում իմուն կոմպլեքսներ են

99. Ստորև բերվածներից ընտրել ֆիբրինոիդ ուռճացմանը բնորոշ դրույթ.
Ա- Հանդիպում է ստամոքսի քրոնիկական խոցի հատակում
Բ- Հաջորդում է հիալինոզին
Գ- Աղավաղված սինթեզի արդյունք է
Դ- Մակերեսային և դարձելի դիստրոֆիա է

100. Նշվածները բնորոշ են մուկոիդ ուռճեցմանը, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- Հեմատոքսիլինով և էոզինով ներկելիս տալիս է մետաքրոմազիայի ֆենոմեն
Բ- Դարձելի գործընթաց է
Գ- Հանդիպում է ռևմատիկ հիվանդությունների ժամանակ
Դ- Անոթահենքային սնուցախանգարում է

101. Նշվածները սպիտակուցային անոթահենքային դիստրոֆիա են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- Ճարպային փայծաղ
Բ- Լեյկոպլակիա
Գ- Սագոյի փայծաղ
Դ- Ամիլոիդային կարդիոմեգալիա

102. Նշվածները բոլորը բնորոշ են հիալինոզին, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- օրգանները մեծացած են, պինդ, ցիանոտիկ
Բ- հաջորդում է ֆիբրինոիդ ուռճացմանը
Գ- ելքը հիմնականում անբարենպաստ է
Դ- ախտահարվում են հիմնականում մանր զարկերակները

103. Աճխաջրային պարենքիմատոզ դիստրոֆիաները դրսևորվում են՝
Ա- գլիկոգենի կուտակումներով երիկամների խողովակներում
Բ- խոշորկաթիլային կուտակումներով երիկամների կծիկներում
Գ- լորձային դիստրոֆիա՝ հեպատոցիտներում
Դ- բալոնային դիստրոֆիա՝ հեպատոցիտներում

104. Ընտրել աճխաջրային պարենքիմատոզ դիստրոֆիայի արտահայտությունը.
Ա- Երիկամների ախտահարում՝ շաքարային դիաբետի ժամանակ
Բ- Աորտայի ախտահարում՝ աթերոսկլերոզի դեպքում
Գ- Պսակաձև զարկերակների ախտահարում՝ հիպերտոնիկ հիվանդության ժամանակ
Դ- Երիկամների ախտահարում՝ պարբերական հիվանդության ժամանակ

105. Երիկամներում պարենքիմատոզ աճխաջրային դիստրոֆիայի դեպքում հայտնաբերում են.
Ա- Փրփրուն ցիտոպլազմայով նեֆրոցիտներ
Բ- Պսևդոմուցին կծիկներում
Գ- Ճարպային կաթիլներ ոլորուն խողովակների էպիթելում

Դ- Բալոնային դիստրոֆիա պրոքսիմալ ոլորուն խողովակում

106. Ընտրեք մուկովիսցիդոզին բնորոշ դրույթ.
Ա- ածխաջրային պարենքիմատոզ դիստրոֆիա է
Բ- ածխաջրային անոթահենքային դիստրոֆիա է
Գ- հայտնաբերվում է Կոնգո կարմիրով ներկելիս
Դ- հայտնաբերվում է Վան Գիզոնի մեթոդով ներկելիս

107. Ընտրեք անոթահենքային ածխաջրային դիստրոֆիային բնորոշ դրույթ.
Ա- հայտնաբերվում է միքսեդեմա հիվանդության դեպքում
Բ- մուկոիդ ուռճեցումը դրա տարատեսակն է
Գ- բնորոշ է մետաքրոմազիայի ֆենոմենը
Դ- հայտնաբերվում է Բեստի կարմինով ներկելիս

108. Ընտրեք պարենքիմատոզ ածխաջրային դիստրոֆիային բնորոշ դրսևորում.
Ա- Լորձային քաղցկեղ ստամոքսում
Բ- Մալորիի մարմնիկներ հեպատոցիտներում
Գ- Բալոնային դիստրոֆիա երիկամների խողովակներում
Դ- Ամորֆ զանգվածներ փայծաղի ֆոլիկուլներում

109. Բոլոր նշվածները բնորոշ են պարենքիմատոզ ածխաջրային դիստրոֆիաներին, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ
Ա- խոշոր կաթիլային կուտակումներ նեֆրոցիտներում
Բ- ստամոքսի լորձային քաղցկեղ
Գ- մուկովիսցիդոզ
Դ- կոլոիդային խպիպ

110. Բոլոր նշվածները բնորոշ են պարենքիմատոզ ածխաջրային դիստրոֆիաներին, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- գլիկոգենային ինֆիլտրացիա հեպատոցիտներում
Բ- կոլոիդային քաղցկեղ
Գ- փրփրուն ցիտոպլազմայով նեֆրոցիտներ
Դ- մուկովիսցիդոզ

111. Բոլոր նշվածները բնորոշ են անոթահենքահին ածխաջրային դիստրոֆիաներին, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- առավելապես ախտահարվում են երիկամները
Բ- հայտնաբերվում է միքսեդեմա հիվանդության դեպքում
Գ- բնորոշ է հյուսվածքների լորձացումը
Դ- ելքը կարող է լինել դարձելի

112. Ընտրեք պարենքիմատոզ ճարպային դիստրոֆիային բնորոշ դրույթ.
Ա- ամենահաճախը հանդիպում է լյարդում
Բ- տեղակայվում է օրգանի հենքում
Գ- ելքում զարգանում է թաց մեռուկ

Դ- հայտնաբերվում է կոնգո կարմիրով

113. Ընտրեք պարենքիմատոզ ճարպային դիստրոֆիային բնորոշ դրույթ
Ա- փոշենման կուտակումներ՝ հեպատոցիտներում
Բ- ճարպային կաթիլների կուտակումներ միոկարդի հենքում
Գ- բալոնային դիստրոֆիա՝ նեֆրոցիտներում
Դ- ճարպի կուտակումներ երիկամների շուրջ

114. Սիրտը պարենքիմատոզ ճարպային դիստրոֆիայի դեպքում անվանում են.
Ա- Վագրի
Բ- Մազմզոտ
Գ- Գորշ ատրոֆիկ
Դ- Ձրահապատ

115. Ընտրեք սրտի պարենքիմատոզ ճարպային դիստրոֆիային բնորոշ դրույթ.
Ա- ճարպը կուտակվում է ենթաէնդոկարդային կարդիոմիոցիտներում
Բ- հայտնաբերվում են կարդիոմիոցիտներ խոշոր կաթիլային ճարպակալումով
Գ- անվանում են ճարպակալած սիրտ
Դ- հայտնաբերվում է Վան Գիզոնի մեթոդով ներկելիս

116. Ընտրեք լյարդի պարենքիմատոզ ճարպային դիստրոֆիային բնորոշ դրույթ.
Ա- լյարդը չափերով մեծացած է, թորշոմած, դեղնակարմրավուն
Բ- հայտնաբերվում է հեպատոցիտների կնճռոտում
Գ- անվանում են լյարդի գորշ ապաճ
Դ- հայտնաբերվում է Բեստի կարմինով ներկելիս

117. Ընտրեք երիկամի պարենքիմատոզ ճարպային դիստրոֆիային բնորոշ դրույթ.
Ա- ճարպը կուտակվում է ոլորուն խողովակների նեֆրոցիտներում
Բ- առավելապես տուժում է կծիկային ֆիլտրացիան
Գ- անվանում են ճարպային երիկամ
Դ- հայտնաբերվում է սուդան 3-ով ներկելիս՝ սև գունավորմամբ

118. Բոլոր նշվածները բնորոշ են միոկարդի պարենքիմատոզ ճարպային դիստրոֆիային, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- էպիկարդի տակ հայտնաբերվում է ճարպի հաստ շերտ
Բ- էնդոկարդի կողմից երևում է դեղնասպիտակավուն գծավորություն
Գ- սրտի խոռոչները լայնացած են, սրտամկանը թորշոմած է
Դ- կարդիոմիոցիտներում հայտնաբերվում են ճարպի փոշենման և մանր կաթիլային կուտակումներ

119. Բոլոր նշվածները բնորոշ են լյարդի պարենքիմատոզ ճարպային դիստրոֆիային, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- ախտահարումն ունի օջախային բնույթ
Բ- սուդան 3-ով ներկելիս ունի կարմրանարնջագույն գունավորում
Գ- լյարդը չափերով մեծացած է, թորշոմած

Դ- հեպատոցիտներում հայտնաբերվում են ճարպի փոշենման, մանր և խոշոր կաթիլային կուտակումներ

120. Բոլոր նշվածները բնորոշ են երիկամների պարենքիմատոզ ճարպային դիստրոֆիային, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- առավելապես ախտահարվում են պոդոցիտները
Բ- կեղևային նյութը ուռճացված է, գորշ՝ դեղին բծերով
Գ- երիկամները չափերով մեծացած են, թորշոմած
Դ- օսմիական թթվով ներկելիս ունի սև գունավորում

121. Ընտրեք հիդրոպիկ դիստրոֆիային բնորոշ դրույթ.
Ա- ավարտվում է ֆոկալ թաց մեռուկով
Բ- փոխակերպվում է հիալինակաթիլային դիստրոֆիայի
Գ- առավել հաճախ հանդիպում է կարդիոմիոցիտներում
Դ- հայտնաբերվում է Կոնգո կարմիրով

122. Ընտրեք հիդրոպիկ դիստրոֆիային բնորոշ դրույթ.
Ա- փոխակերպվում է բալոնային դիստրոֆիայի
Բ- ավարտվում է ֆոկալ չոր մեռուկով
Գ- առավել հաճախ հանդիպում է կարդիոմիոցիտներում
Դ- հայտնաբերվում է Բեստի կարմինով

123. Ընտրեք հիդրոպիկ դիստրոֆիային բնորոշ դրույթ.
Ա- պարենքիմատոզ սպիտակուցային դիստրոֆիա է
Բ- կարող է փոխակերպվել հիալինային դիստրոֆիայի
Գ- առավել հաճախ հանդիպում է անոթի պատում
Դ- մակերեսային և դարձելի դիստրոֆիա է

124. Ընտրեք եղջերային դիստրոֆիային բնորոշ դրույթ.
Ա- եղջերային նյութի ավելցուկային գոյացումն է
Բ- փոխակերպվում է հիալինակաթիլային դիստրոֆիայի
Գ- մակերսային և դարձելի դիստրոֆիա է անկախ արտահայտվածության աստիճանից
Դ- հայտնաբերվում է սուդանով ներկելիս

125. Ընտրեք եղջերային դիստրոֆիային բնորոշ դրույթ.
Ա- դրսևորվում է լորձաթաղանթների լեյկոպլակիայով
Բ- դրսևորվում է էպիդերմիսի եղջերացմամբ
Գ- անոթահենքային դարձելի դիստրոֆիա է
Դ- կարող է փոխակերպվել բալոնային դիստրոֆիայի

126. Ընտրեք եղջերային դիստրոֆիային բնորոշ դրույթ
Ա- դրսևորվում է մաշկի էպիթելի գերեղջերացմամբ
Բ- փոխակերպվում է հիալինային դիստրոֆիայի
Գ- պատճառը եղջերային նյութի թերգոյացումն է
Դ- հայտնաբերվում է Պեռլսի ռեակցիայով

127. Ստորև բերված բոլորը բնորոշ են ջրգողային դիստրոֆիային, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- Նեֆրոցիտներն ունեն փրփրավոր ցիտոպլազմա
Բ- Կորիզը հրվում է բջջի ծայրամաս
Գ- Փոխակերպվում է բալոնային դիստրոֆիայի
Դ- Ելքը անբարենպաստ է

128. Ստորև բերված բոլորը բնորոշ են եղջերային դիստրոֆիային, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- Դրսևորվում է մաշկի եղջերացմամբ
Բ- Հայտնաբերվում է եղջերային նյութի գերգոյացում
Գ- Իխթիոզը եղջերային դիստրոֆիայի օրինակ է
Դ- Պարենքիմատոզ սպիտակուցային դիստրոֆիա է

129. Ստորև բերված բոլորը բնորոշ են հիդրոպիկ դիստրոֆիային, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- Առաջանում է հանքային աղերի փոխանակության խանգարման արդյունքում
Բ- Փոխակերպվում է բալոնային դիստրոֆիայի
Գ- Ելքում զարգանում է թաց մեռուկ
Դ- Ուղեկցվում է բջջի ֆունկցիաների ընկճմամբ

130. Նշվածներից որն է սպիտակուցային պարենքիմատոզ դիստրոֆիայի դրսևորում.
Ա- Մալորիի մարմնիկներ
Բ- Լեյկոդերմա
Գ- Ճարպային փայծաղ
Դ- Վագրի սիրտ

131. Ստորև բերվածներից ընտրեք սպիտակուցային պարենքիմատոզ դիստրոֆիան.
Ա- բալոնային դիստրոֆիա՝ նեֆրոցիտներում
Բ- խոշորկաթիլային կուտակումներ՝ միոկարդի հենքում
Գ- փոշենման կուտակումներ՝ հեպատոցիտներում
Դ- գլիկոգենի կուտակումներ՝ երիկամների խողովակներում

132. Ընտրել սպիտակուցային պարենքիմատոզ դիստրոֆիան.
Ա- Լեյկոպլակիա
Բ- Վագրի սիրտ
Գ- Սագի լյարդ
Դ- Մելանոդերմա

133. Նշվածներից որն է սպիտակուցային պարենքիմատոզ դիստրոֆիա
Ա- Մալորիի մարմնիկներ լյարդում
Բ- Սագոյի փայծաղ
Գ- Սագի լյարդ
Դ- Լեյկոդերմա

134. Ընտրեք պարենքիմատոզ սպիտակուցային դիստրոֆիայի բնորոշում.
Ա- ցիտոպլազմատիկ հեղուկով վակուոլներ՝ նեֆրոցիտներում
Բ- խոշորկաթիլային կուտակումներ՝ փայծաղի ֆոլիկուլներում

Գ- սուդանոֆիլ կուտակումներ՝ հեպատոցիտներում
Դ- փրփրավոր ցիտոպլազմայով նեֆրոցիտներ

135. Ընտրեք հիալինակաթիլային դիստրոֆիային բնորոշ դրույթ.
Ա- ավարտվում է ֆոկալ մակարդումային մեռուկով
Բ- փոխակերպվում է բալոնային դիստրոֆիայի
Գ- առավել հաճախ հանդիպում է փայծաղի ֆոլիկուլներում
Դ- սուդանոֆիլ կուտակումներ՝ երիկամների խողովակներում

136. Ստորև բերված բոլորը սպիտակուցային պարենքիմատոզ դիստրոֆիա են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- Փրփրավոր ցիտոպլազմայով նեֆրոցիտներ
Բ- Մալորիի մարմնիկներ հեպատոցիտներում
Գ- Երիկամի ոլորուն խողովակների հիալինակաթիլային դիստրոֆիա
Դ- Իխթիոզ

137. Ստորև բերված բոլորը սպիտակուցային պարենքիմատոզ դիստրոֆիա են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- Փրփրավոր ցիտոպլազմայով նեֆրոցիտներ
Բ- Ալկոհոլային հիալին՝ հեպատոցիտներում
Գ- Երիկամի ոլորուն խողովակների հիալինակաթիլային դիստրոֆիա
Դ- Հիպերկերատոզը մաշկում

138. Նշվածներից որն է հանդիսանում կոլիկվացիոն մեռուկի օրինակ.
Ա- գլխուղեղի իշեմիկ ինֆարկտը
Բ- սրտամկանի ինֆարկտը
Գ- Ցենկերյան մեռուկը
Դ- կազեոզ նեկրոզը

139. Ստորև նշված դրույթներից որն է ճիշտ կոլլիկվացիոն մեռուկի դեպքում.
Ա- հաճախ զարգանում է աղիներում
Բ- սովորաբար զարգանում է սպիտակուցներով հարուստ հյուսվածքներում
Գ- պրոտեոլիտիկ և ցիտոլիտիկ պրոցեսները բնորոշ չեն
Դ- հաճախ զարգանում է սրտամկանում

140. Ստորև նշվածներից որն է հանդիսանում չոր մեռուկի օրինակ.
Ա- կազեոզ մեռուկը թոքերում
Բ- նոման շեքի փափուկ հյուսվածքներում
Գ- աղիների գանգրենան
Դ- սեկվեստրը ոսկրերում

141. Ստորև նշվածներից որը կարող է հանդիպել նեկրոզի բարենպաստ ելքի դեպքում.
Ա- դիստրոֆիկ կրակալումը
Բ- մետաբոլիկ կրակալումը
Գ- դիսպլաստիկ կրակալումը

Դ- մետաստատիկ կրակալումը

142. Ստորև նշվածներից որն է հանդիսանում գանգրենայի օրինակ.
Ա- պառկելախոցը
Բ- պանկրեոնեկրոզը
Գ- պարանեկրոզը
Դ- ստեատոնեկրոզը

143. Ստորև նշվածներից որ հիվանդության դեպքում է հանդիպում մոմանման մեռուկը.
Ա- որովայնային տիֆ
Բ- ռևմատիկ միոկարդիտ
Գ- երիկամի ամիլոիդոզ
Դ- անոթների հիալինոզ

144. Ստորև նշված դրույթները ճշմարիտ են նեկրոտիկ նեֆրոզի համար, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- երիկամի կծիկներում կորիզները բացակայում են
Բ- զարգանում է շոկի դեպքում
Գ- ոլորուն խողովակների էպիթելային բջիջներում կորիզները բացակայում են
Դ- հանդիսանում է անոթային մեռուկի տեսակ

145. Նշվածները հանդիսանում են կոագուլացիոն մեռուկի օրինակներ, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- գլխուղեղի իշեմիկ ինֆարկտը
Բ- անոթի պատի ֆիբրինոիդ մեռուկը
Գ- մոմանման մեռուկը
Դ- թոքերի լոռանման մեռուկը

146. Կոագուլյացիոն՝ չոր մեռուկ առավելապես հանդիպում է նշված բոլոր հյուսվածքներում, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- գլխուղեղում, ողնուղեղում
Բ- վերջույթների փափուկ հյուսվածքներում
Գ- երիկամներում
Դ- սրտանկանում

147. Նշվածներից որն է հանդիսանում անուղղակի նեկրոզի օրինակ.
Ա- Արտյուսի ֆենոմենի դեպքում զարգացած նեկրոզը
Բ- կարդիոմիոցիտների նեկրոզը դիֆթերիայի դեպքում
Գ- մկնդեղի ազդեցությամբ լյարդում զարգացող նեկրոզը
Դ- երիկամի խողովակների նեկրոզը սուլեմայով թունավորման դեպքում

148. Ստորև նշվածներից ընտրել նեկրոզի տարատեսակ՝ ըստ առաջացման պատճառի
Ա- անոթային (իշեմիկ)
Բ- պառկելախոց
Գ- կոլիկվացիոն

Դ- սեկվեստր

149. Ստորև նշվածներից որն է հանդիսանում նեկրոզի բարենպաստ ելք.
Ա- բուշտի առաջացում
Բ- թարախային լուծում
Գ- բորբոքում
Դ- դիսպլազիա

150. Ստորև նշված դրույթներից, որն է ճիշտ կարիոռեքսիսի համար.
Ա- կորիզի տրոհումն է բեկորների
Բ- կորիզի կրկնապատկումն է
Գ- կորիզի կնճռոտումն է
Դ- կորիզի լուծումն է

151. Նշվածներից ո՞րն է բնորոշում ալերգիկ մեռուկը.
Ա- Ֆիբրինոիդ մեռուկը ռևմատիկ հիվանդությունների դեպքում
Բ- Ստորին վերջույթների մեռուկը աթերոսկլերոզի դեպքում
Գ- Մեռուկային նեֆրոզը քիմիական գործոնների ազդեցությամբ
Դ- Մաշկի մեռուկը քիմիական այրվածքների դեպքում

152. Նշվածներից ընտրել տրոֆոնևրոտիկ՝ սնուցանյարդային մեռուկը.
Ա- Պառկելախոցեր անկողնային հիվանդի մեջքի շրջանում
Բ- Սրտամկանի մեռուկ պսակաձև զարկերակների աթերոսկլերոզի դեպքում
Գ- Որովայնի ուղիղ մկանի ցենկերյան մեռուկ
Դ- Ֆիբրինոիդ մեռուկ ռևմատոիդ արթրիտի դեպքում

153. Նշվածները հանդիսանում են նեկրոզի զարգացման փուլեր, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- կարիոպիկնոզ
Բ- նեկրոբիոզ
Գ- պարանեկրոզ
Դ- բջջի մահ

154. Ստորև նշվածները նեկրոզի դեպքում ցիտոպլազմայում զարգացող փոփոխություններ են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- պլազմոռագիա
Բ- պլազմոռեքսիս
Գ- պլազմոկոագուլյացիա
Դ- պլազմոլիզիս

155. Նշվածները կարող են հանդիպել նեկրոզի բարենպաստ ելքի դեպքում, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- թարախային լուծում
Բ- ինկապսուլյացիա
Գ- օրգանիզացիա
Դ- պետրիֆիկացիա

156. Անվանեք թոքի ախտաբանությունը, որը զարգանում է թոքային զարկերակի ճյուղերի թրոմբոէմբոլիայի դեպքում:
Ա- հեմոռագիկ ինֆարկտ
Բ- փտախտ
Գ- ընդհանուր հեմոսիդերոզ
Դ- իշեմիկ ինֆարկտ

157. Թոքերի ճարպային էմբոլիայի հայտնաբերման համար կիրառելի ներկման եղանակ է՝
Ա- Սուդան 3
Բ- Պեռլսի ռեակցիա
Գ- Վեյգերտի եղանակ
Դ- Վան-Գիզոն

158. Ընտրել տարբերակ, որտեղ նշված են էմբոլի տեսակներն ըստ կազմության.
Ա- մանրէային, ճարպային, թրոմբային
Բ- պարադոքսալ, հյուսվածքային, օդային
Գ- օդային, գազային, վակատային
Դ- օտար մարմիններով, ռետրոգրադ, առպատային

159. Նշվածներից որն է հանդիսանում հյուսվածքային էմբոլիայի օրինակը.
Ա- Էմբոլիա հարպտղային ջրերով
Բ- Էմբոլիա խոլեստերինի բյուրեղներով
Գ- Էմբոլիա մանրէային գաղութներով
Դ- Էմբոլիա թրոմբի մասնիկներով

160. Նշել ճարպային էմբոլիային բնորոշ դրույթը.
Ա- Կարող է առաջանալ խոշոր խողովակավոր ոսկրերի կոտրվածքների դեպքում
Բ- Հանդիպում է Կեսոնային հիվանդության դեպքում
Գ- Դիտվում է ճարպային սննդի անսահմանափակ օգտագործման դեպքում
Դ- Դիտվում է պարանոցի երակների վնասման դեպքում

161. Կեսոնային հիվանդության դեպում գազային էմբոլիայի հետ միասին զարգանում է.
Ա- վակատային զարկերակային գերարյունություն
Բ- երակային գերարյունություն
Գ- կոլատերալ զարկերակային գերարյունություն
Դ- հյուսվածքային էմբոլիա

162. Ըստ անոթում շարժման ուղղության էմբոլների տեսակներ են բոլորը, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- խառը էմբոլ
Բ- պարադոքսալ էմբոլ
Գ- օրթոգրադ էմբոլ
Դ- ռետրոգրադ էմբոլ

163. Նշված դրույթները ճշմարիտ են ճարպային էմբոլի վերաբերյալ, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- պատճառը՝ ճարպակալում
Բ- պատճառը՝ստորին վերջույթի ճարպային բջջանքի ջնջխում
Գ- կարող է դառնալ հակասական (պարադոքսալ)
Դ- հատուկ ներկման եղանակը՝ սուդան 3

164. Սրտի ձախ կեսից պոկված թրոմբոէմբոլի հավանական ուղղությունը բոլոր նշված անոթներն են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- վերին սիներակ
Բ- կորոնար զարկերակ
Գ- երիկամային զարկերակ
Դ- միջընդերային զարկերակ

165. Նշել թրոմբոզի բարենպաստ ելքը.
Ա- Օրգանիզացիա
Բ- Տրանսֆորմացիա
Գ- Թրոմբոէմբոլիա
Դ- Սեպտիկ լուծում

166. Նշել թրոմբոզի անբարենպաստ ելքը.
Ա- Թրոմբոէմբոլիա
Բ- Ասեպտիկ լուծում
Գ- Խողովակավորում
Դ- Օրգանիզացիա

167. Նշել թրոմբոզի բարենպաստ ելքը.
Ա- Պետրիֆիկացիա
Բ- Տրանսֆորմացիա
Գ- Թրոմբոէմբոլիա
Դ- Սեպտիկ լուծում

168. Նշել թրոմբոզի բարենպաստ ելքը.
Ա- Ասեպտիկ լուծում
Բ- Տրանսֆորմացիա
Գ- Թրոմբոէմբոլիա
Դ- Սեպտիկ լուծում

169. Նշել թրոմբի տեսակ ըստ կազմության.
Ա- Հիալինային
Բ- Լեյկոցիտային
Գ- Պարադոքսալ
Դ- Մարանտիկ

170. Նշել թրոմբի տեսակ ըստ անոթի պատում գրավածդիրքի.

Ա- Թափառող
Բ- Պարադոքսալ
Գ- Խառը
Դ- Մարանտիկ

171. Ստորև բերվածները բոլորը թրոմբոզի բարենպաստ ելք են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ
Ա- թրոմբոէմբոլիա
Բ- ասեպտիկ լուծում
Գ- պետրիֆիկացիա
Դ- խողովակավորում

172. Ստորև բերվածները բոլորը թրոմբոզի բարենպաստ ելք են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- սեպտիկ լուծում
Բ- ասեպտիկ լուծում
Գ- պետրիֆիկացիա
Դ- անոթավորում

173. Ստորև բերվածները թրոմբի տեսակներ են ըստ կազմության, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- պարադոքսալ
Բ- հիալինային
Գ- խառը
Դ- կարմիր

174. Ի՞նչ է հեմոպտոեն.
Ա- արտաքին արյունահոսություն է
Բ- ներքին արյունահոսություն է
Գ- արյունազեղում է թոքերում
Դ- արյունափսխումն է

175. Նշել դիապեդեզ արյունազեղմանը առնչվող դրույթը.
Ա- էրիթրոցիտների պատանցումը թափանցելիության մեծացման հետևանքով
Բ- պատճառը անոթի պատի պատռումն է
Գ- անոթի պատի պլազմատիկ ներծծումն է
Դ- առոզիվ արյունահոսություն է

176. Ընտրել տարբերակ, որում նշված են ներքին արյունահոսության տեսակներ.
Ա- հեմարթրոզ, հեմոպերիտոնեում, հեմոպերիկարդ
Բ- հեմոպտոէ, հեմոթորաքս, հեմոսիդերոզ
Գ- հեմոտեմեզիս, հեմատոմա, հեմոպերիկարդ
Դ- մետրոռագիա, մենոռագիա, մելենա

177. Ի՞նչ է էկխիմոզը.
Ա- արյունազեղումն է ենթամաշկում
Բ- քթային արյունահոսությունն է
Գ- արտաքին արյունահոսություն է

Դ- հյուսվածքների ջրազրկումն է

178. Նշել հեմատոմային բնորոշ դրույթը.
Ա- արյունահոսության տեսակ է
Բ- իշեմիկ մեռուկ է
Գ- հեմոռագիկ ներծծումն է
Դ- դիապեդեզ արյունազեղում է

179. Հեմոպերիկարդը՝
Ա- ինֆարկտի բարդություն է
Բ- հեմատոմայի տեսակ է
Գ- հեմոռագիկ ներծծում է
Դ- պերիկարդի պատռումն է

180. Ստորև բերվածները բոլորն արտաքին արյունահոսություն են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- հեմարթրոզ
Բ- հեմոպտոե
Գ- մելենա
Դ- հեմոտեմեզիս

181. Ստորև բերվածները արյունահոսության տեսակներ են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- հիդրոցելե
Բ- էպիստաքսիս
Գ- մետրոռագիա
Դ- հեմոտեմեզիս

182. Ստորև բերվածներ դրույթները բնորոշ են ստազին, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- հաճախ նախորդում է հոսքի արագացումը
Բ- հաճախ դարձելի գործընթաց է
Գ- ուղեկցվում է սլաջ ֆենոմենով
Դ- հանդիպում է մազանոթներում

183. Ընտրել ուղեղի ինֆարկտին համապատասխանող տարբերակը.
Ա- անկանոն, թաց, սպիտակ
Բ- անկանոն, թաց, սպիտակ հեմոռագիկ պսակով
Գ- սեպաձև, չոր, սպիտակ
Դ- սեպաձև, թաց, սպիտակ կամ կարմիր

184. Ստորև բերվածներից ընտրել ինֆարկտի զարգացման անմիջական պատճառ.
Ա- սուր խցանումային սակավարյունություն
Բ- կոմպրեսիոն երակային գերարյունություն, ստազ
Գ- վակատային գերարյունություն, սլաջ
Դ- քրոնիկական օբստրուկտիվ սակավարյունություն

185. Սրտամկանի ինֆարկտին բնորոշող տարբերակն է.

Ա- չոր, անկանոն, սպիտակ, հեմոռագիկ պսակով ինֆարկտ
Բ- չոր, սեպաձև, հեմոռագիկ ինֆարկտ
Գ- կոլիկվացիոն, կարմիր սեպաձև ինֆարկտ
Դ- թաց, անկանոն, սպիտակ ինֆարկտ

186. Ընտրել սրտամկանի ինֆարկտի բարենպաստ ելքը
Ա- հետինֆարկտային խոշոր օջախային կարդիոսկլերոզ
Բ- հեմոպերիկարդ
Գ- երկրորդային միոմալացիա
Դ- ֆիբրինային պերկարդիտ

187. Թոքի ինֆարկտի վերաբերյալ ճշմարիտ դրույթն է.
Ա- սեպաձև է, կարմիր, ուղեկցվում է ֆիբրինոզ պլևրիտով
Բ- անկանոն է, կարմիր, կարող է բարդանալ գանգրենայով
Գ- պատճառը ձախ փորոքային անբավարարությունն է
Դ- պատճառը աորտայի աթերոսկլերոտիկ վահանիկից պոկված թրոմբն է

188. Ընտրել երիկամի ինֆարկտի համար բնորոշ դրույթ.
Ա- իշեմիկ ինֆարկտի զարգացումը սովորաբար պայմանավորված է թրոմբոզով
Բ- ըստ ձևի այն անկանոն է, հեմոռագիկ
Գ- երիկամը չափերով մեծացած է, մոմանման
Դ- դիտվում է երիկամի ցիանոտիկ ինդուրացիա

189. Ըստ գույնի ինֆարկտները լինում են հետևյալ տեսակների, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- կոագուլյացիոն
Բ- սպիտակ
Գ- սպիտակ հեմոռագիկ պսակով
Դ- կարմիր

190. Ինֆարկտի զարգացման անմիջական պատճառներ են բոլորը, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- կոմպրեսիոն սակավարյունություն
Բ- զարկերակների երկարատև կծկում
Գ- թրոմբոզ
Դ- էմբոլիա

191. Ստորև բերվածները սրտամկանի ինֆարկտի բարդություններ են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- սուր միոկարդիտ
Բ- ներքին արյունահոսություն
Գ- ֆիբրինային պերիկարդիտ
Դ- սրտի պատռում

192. Սրտամկանի ինֆարկտի դեպքում ինչպիսի ձևաբանական փոփոխություններ են հնարավոր այլ օրգաններում.

Ա- երիկամների ցիանոտիկ ինդուրացիա
Բ- թոքերի այտուց
Գ- լյարդի կարդիոգեն ցիռոզ
Դ- երիկամների երկրորդային կնճռոտում

193. Նշել սրտամկանի ինֆարկտին բնորոշ ձևաբանական փոփոխությունները.
Ա- մեռուկի գոտին անկանոն է
Բ- մեռուկացած հյուսվածքը սեպաձև է, ներծծված է արյունով
Գ- մեռուկը սեպաձև է, բայց իշեմիկ
Դ- մեռուկի գոտին շրջապատված է լիմֆոպլազմոցիտար և մակրոֆագային ներսփռանքով

194. Ընտրել կարմիր ինֆարկտին բնորոշ դրույթները.
Ա- գույնը պայմանավորված է սպիտակուցներով
Բ- միշտ սեպաձև է
Գ- դիտվում է միայն թոքերում
Դ- պայմանավորված է զարկերակների բերանակցումներով

195. Նշել ինֆարկտի մանրադիտակային բնորոշ փոփոխությունները.
Ա- հիալինոզ
Բ- գլիկոգենի վերացում
Գ- կորիզի միտոզ
Դ- ճարպային վակուոլների առաջացում

196. Որ բջիջներն են գերակշռում թարախային բորբոքման օջախում.
Ա- Լեյկոցիտներ
Բ- Մոնոցիտներ
Գ- Լիմֆոցիտներ
Դ- Պարարտ բջիջներ

197. Որն է կարծր ֆլեգմոնայի և փափուկ ֆլեգմոնայի տարբերությունը.
Ա- Հյուսվածքների չոր մակարդումային մեռուկի առկայությունը
Բ- Զարգացումը միջմկանային շերտերում, ենթամաշկային բջջանքում
Գ- Տարածման հակումը՝ թարախային անոթաբորբերի առաջացումով
Դ- Էքսուդատում մեծ քանակությամբ պոլիմորֆ կորիզավոր լեյկոցիտների առկայությունը

198. Ստորև թվարկվածներից ընտրեք թարախային բորբոքման բնորոշ առանձնահատկությունը.
Ա- էքսուդատը պարունակում է մեծաքանակ ձևավոր տարրեր՝ հիմնականում կենդանի և մահացած նեյտրոֆիլներ
Բ- ընթացքը միշտ սուր է
Գ- ուղեկցվում է լորձաթաղանթի մակերեսին փառերի գոյացմամբ
Դ- էքսուդատը պարունակում է քիչ սպիտակուցներ և սակավաթիվ ձևավոր տարրեր

199. Ստորև թվարկվածներից ընտրեք թարախային բորբոքման տարատեսակը.
Ա- էմպիեմա
Բ- գրանուլեմա
Գ- կատառ
Դ- զրահապատ սիրտ

200. Ստորև թվարկվածներից ընտրեք երկարատև քրոնիկական թարախային բորբոքման հնարավոր բարդությունը.
Ա- ամիլոիդոզ
Բ- հիալինոզ
Գ- մուսկատային լյարդ
Դ- հեմոսիդերոզ

201. Ստորև թվարկվածներից ընտրեք կարծր ֆլեգմոնայի բնորոշ առանձնահատկությունը.
Ա- հյուսվածքների մակարդումային մեռուկի օջախների առկայությունը
Բ- մարմնի խոռոչներում և խոռոչավոր օրգաններում թարախի կուտակումը
Գ- հյուսվածքների թարախային լուծումը և անջատումը
Դ- թարախածին թաղանթի ձևավորումը

202. Ստորև թվարկվածները թարախային բորբոքման տեսակներ են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- գրանուլեմա
Բ- ֆլեգմոնա
Գ- աբսցես
Դ- էմպիեմա

203. Ստորև թվարկվածները թարախային բորբոքման օրինակներ են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- Լեպրոմա
Բ- Էմպիեմա
Գ- Ֆուրունկուլ
Դ- Ցելյուլիտ

204. Ստորև թվարկվածները բնորոշ են ֆլեգմոնային, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- Հարևան հյուսվածքներից սահմանազատված է անոթներով հարուստ շարակցական հյուսվածքով
Բ- Թարախային էքսուդատը ներծծվում է հյուսվածքային տարրերի միջև
Գ- Կարծր ֆլեգմոնան ուղեկցվում է հյուսվածքների չոր մեռուկի առաջացմամբ
Դ- Կարող է հանգեցնել լիմֆանգիտի, ֆլեբիտի, թրոմբոֆլեբիտի զարգացման

205. Դիֆթերիայով հիվանդ երեխան մահացավ ասֆիքսիայից (շնչահեղձությունից): Ընտրեք տվյալ իրադրության համար ճշմարիտ պնդումը.
Ա- Ասֆիքսիան կրուպոզ տրախեիտի բարդություն է

Բ- Ասֆիքսիան պայմանավորված է շնչուղիների հյուսվածքների այտուցով
Գ- Ասֆիքսիան դիֆթերիտիկ բորբոքման հետևանք է
Դ- Ասֆիքսիայի զարգացումը պայմանավորված է օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայով

206. Որ օրգանում է զարգանում ֆիբրինային բորբոքման դիֆթերիտիկ տարատեսակը.
Ա- Կերակրափողում
Բ- Շնչափողում
Գ- Բրոնխներում
Դ- Որովայնամզում

207. Դիզենտերիայից մահացած հիվանդի դիահերձման ժամանակ հաստ աղիքի լորձաթաղանթը այտուցված էր, գերարյունային, պատված սպիտակամոխրագույն հաստ փառով, որն ամուր կպած էր ենթադիր հյուսվածքներին: Ինչ պրոցես է զարգացել հաստ աղիքում.
Ա- Դիֆթերիտիկ կոլիտ
Բ- Աղիքի ֆլեգմոնա
Գ- Շճային կոլիտ
Դ- Ոչ սպեցիֆիկ խոցային կոլիտ

208. Ստորև թվարկվածներից որն է սրտի պատկերավոր անվանումը միզարյունության ժամանակ.
Ա- մազմզոտ սիրտ
Բ- եզան սիրտ
Գ- վագրի սիրտ
Դ- հսկա սիրտ

209. Ստորև թվարկված գործոններից որն է պայմանավորում դիֆթերիտիկ բնույթի բորբոքման զարգացումը.
Ա- Ծածկող էպիթելի տեսակը
Բ- Վնասող գործոնի ազդեցության երկարատևությունը
Գ- Լեյկոցիտների արտադրած պրոտեոլիտիկ ֆերմենտները
Դ- Իմունիտետի անբավարարությունը

210. Ֆիբրինային բորբոքման ժամանակ էքսուդատում հայտնաբերվում են.
Ա- Պոլիմորֆ կորիզավոր լեյկոցիտներ
Բ- Հսկա բազմակորիզ բջիջներ
Գ- Լիմֆոցիտներ
Դ- Հիստիոցիտներ

211. Ստորև թվարկվածները ճիշտ են ֆիբրինոզ բորբոքման համար, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- Զարգանում է հյուսվածքների մեռուկի և անաէրոբ միկրոֆլորայի միացման հետևանքով

Բ- Զարգացմանը նպաստում են հյուսվածքների ալտերատիվ փոփոխությունները և մեծ քանակությամբ հյուսվածքային թրոմբոպլաստինի ձերբազատումը
Գ- Տեղակայվում է լորձաթաղանթներում և շճային թաղանթներում
Դ- Կարող է զարգանալ թոքերում

212. Ստորև թվարկվածները ճիշտ են կրուպոզ բորբոքման համար, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- Զարգանում է բկանցքում՝ անաէրոբ միկրոֆլորայի միացման հետևանքով
Բ- Առաջանում է հյուսվածքների ոչ խորը մեռուկի դեպքում
Գ- Տեղակայվում է միաշերտ էպիթելով պատված լորձաթաղանթներում և շճային թաղանթներում
Դ- Կարող է զարգանալ թոքերում

213. Դիֆթերիտիկ բորբոքման համար ճշմարիտ են բոլոր դրույթները, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- հանդիսանում է սրտամկանի տրանսմուրալ ինֆարկտի բարդություն
Բ- հաստ աղիքի բորբոքումը դիզենտերիա դեպքում
Գ- բկանցքի ախտահարումը դիֆթերիայի դեպքում
Դ- առաջանում է միզապարկում, կերակրափողում, արգանդի վզիկում

214. Ստորև թվարկվածներից որն է հանդիսանում շճային բորբոքման ելք.
Ա- Պարենքիմատոզ օրգանների սկլերոզ
Բ- Խոցերի գոյացում
Գ- Շճային խոռոչների օբլիտերացիա
Դ- Քաղցկեղի զարգացում

215. Ստորև թվարկվածներից ընտրեք շճային բորբոքման ձևաբանական բնութագիրը.
Ա- պղտոր հեղուկ՝ սպիտակուցներով և բջջային տարրերով
Բ- խիտ կոնսիստենցիայի դեղնականաչավուն հեղուկ՝ բնորոշ հոտով
Գ- առատ լորձ պարունակող էքսուդատ
Դ- լորձաթաղանթի մակերեսին դեղնամոխրագույն փառ

216. Ստորև թվարկվածներից ո՞րն է արյունահոսական բորբոքման օրինակը.
Ա- կարբունկուլ՝ սիբիրյան խոցի դեպքում
Բ- սրտապարկի բորբոքումը տրանսմուրալ ինֆարկտի դեպքում
Գ- փափուկ ուղեղաթաղանթի բորբոքումը մենինգոկոկային մենինգիտի դեպքում
Դ- նշիկների բորբոքումը դիֆթերիայի դեպքում

217. Ստորև թվարկվածներից ո՞րն է էքսուդատիվ բորբոքման տեսակ.
Ա- նեխային
Բ- գրանուլեմատոզ
Գ- միջանկյալ
Դ- ֆիբրոզ

218. Ստորև թվարկվածներից ո՞րն է նեխային բորբոքման օրինակը.
Ա- նորածինների նեկրոտիկ կոլիտը

Բ- սրտապարկի բորբոքումը ուրեմիայի դեպքում
Գ- լորձաթաղանթների կատառը
Դ- նշիկների բորբոքումը դիֆթերիայի դեպքում

219. Ստորև թվարկվածներից ընտրել արյունահոսական բորբոքմանը բնորոշ դրույթ.
Ա- կարևոր նշանակություն ունի անոթների թափանցելիության խիստ մեծացումը
Բ- զարգանում է հյուսվածքների արտահայտված ջնջխման պատճառով՝ անաէրոբ մանրէների մասնակցությամբ
Գ- էքսուդատում առկա է մեծ քանակությամբ լորձ
Դ- էքսուդատում առկա են մեծաքանակ նեյտրոֆիլներ

220. Կրուպոզ թոքաբորբի գորշ լյարդացման փուլում էքսուդատը կազմված է՝
Ա- այտուցային հեղուկից և մանրէներից
Բ- էրիթրոցիտներից և ֆիբրինից
Գ- լեյկոցիտներից, մակրոֆագերից և ֆիբրինից
Դ- հատիկավոր շարակցական հյուսվածքից

221. Պլևրայի էմպիեման հաճախ զարգացող բարդություն է հետևյալ հիվանդությունների դեպքում՝
Ա- օջախային բրոնխաթոքաբորբ
Բ- թոքի քաղցկեղ
Գ- թոքի էմֆիզեմա
Դ- պնևմոսկլերոզ

222. Օբստրուկտիվ էմֆիզեմայի դեպքում էլաստինային կառուցվածքների փոփոխություններն են՝
Ա- ապաճը (ատրոֆիա)
Բ- հատվածավորումը (ֆրագմենտացիա)
Գ- գերաճը (հիպերտրոֆիա)
Դ- կազմալուծումը (լիզիս)

223. Թոքի էմֆիզեմայի դեպքում ախտահարումը տեղակայվում է՝
Ա- շնչափողում
Բ- բրոնխներում
Գ- բրոնխիոլներում
Դ- ացինուսում

224. Պնևմոկոնիոզների առաջացումը պայմանավորված է՝
Ա- պնևմոկոկերով
Բ- բույսերի փոշիներով
Գ- արտադրական փոշիներով
Դ- մակրոֆագերի ռեակտիվականության խանգարումներով

225. Ստորև նշվածներից ո՞րը թոքային սրտի մակրոսկոպիկ նշան չէ.
Ա- աջ փորոքի գերաճը

Բ- էպիկարդի տակ ոլորուն անոթները
Գ- սրտի չափերի մեծացումը
Դ- սրտամկանի թորշոմ կոնսիստենցիան

226. Նշվածներից ո՞րը թոքերի օբստրուկտիվ հիվանդություն չէ.
Ա- թոքաբորբը
Բ- էմֆիզեման
Գ- բրոնխային ասթման
Դ- բրոնխաէկտազները

227. Քրոնիկական բրոնխիտի մակրոսկոպիական նշան է՝
Ա- լորձաթարախային պարունակությունը բրոնխի լուսանցքում
Բ- մեղրաբջջային թոքի ձևավորում
Գ- բրոնխների գլանաձև լայնանք
Դ- փրփրաարյունային հեղուկ թոքերում

228. Թոքի պանացինար էմֆիզեմայի դեպքում ախտահարումը տեղակայված է՝
Ա- գլխավոր բրոնխներում
Բ- բրոնխներում և ացինուսում
Գ- ացինուսում
Դ- բրոնխիոլաներում

229. Սուր բրոնխիտի դեպքում հայտնաբերվում են՝
Ա- բրոնխի պատի սկլերոտիկ փոփոխություններ
Բ- բրոնխի պատի պարկաձև լայնանք
Գ- բրոնխների լուսանցքում շճալորձային-թարախային էքսուդատ՝ լորձաթաղանթի գերարյունությամբ
Դ- ալվեոլներում էքսուդատի առկայություն

230. Թոքային հիվանդությունների և դրանց ախտաբանության զույգերից ո՞րն է ճիշտ.
Ա- Քրոնիկ բրոնխիտ՝ հարթ մկանների հիպերպլազիա և լորձի ավելցուկ արտազատում
Բ- Էմֆիզեմա՝ օդային տարածության ընդլայնում պատերի քայքայմամբ
Գ- Բրոնխոէկտազիա՝ լորձային գեղձի հիպերպլազիա և հիպերսեկրեցիա
Դ- Ասթմա՝ շնչուղիների լայնացում և սպիական փոփոխություններ

231. Թոքերի քրոնիկական օբստրուկտիվ հիվանդություններին բնորոշ է.
Ա- Ասթման դեպքերի մեծ մասն է կազմում
Բ- Բրոնխոէկտազները հիմանականում ախտահարում են շնչառական բրոնխիոլները
Գ- Պանացինար էմֆիզեման հիմնականում կապված է Ալֆա 1 անտիտրիպսինի անբավարարության հետ
Դ- Թոքային սիրտը էմֆիզեմայի ընդհանուր դրսևորումն է

232. Մեծահասակների շնչառական դիսթրես համախտանիշ (ՄՇԴՀ)-ի ամենատարածված պատճառն է.
Ա- Պանկրեատիտ

Բ- Այրվածքներ
Գ- Թմրամիջոցների գերդոզավորում
Դ- Սեպսիսը

233. Համեն Ռիչի հիվանդությունը դա՝
Ա- տարբերակված ադենոկարցինոմա
Բ- սուր ինքնածին ֆիբրոզացնող ալվեոլիտ
Գ- թոքերի սարկոիդոզ
Դ- էկզոգեն ալերգիկ ալվեոլիտ

234. Մեծահասակների դիսթրես համախտանիշը պայմանավորված է.
Ա- թոքային այտուցով
Բ- սուրֆակտանտի անբավարարությամբ
Գ- ալվեոլային միջնապատերի մազանոթների վնասմամբ
Դ- առաջին կարգի պնևմոցիտների վնասմամբ

235. Թոքերի ատելեկտազը թոքերի հյուսվածքի հետևյալ ախտահարումն է.
Ա- բարձրացած օդակրությունը
Բ- բորբոքում ալվեոլներում
Գ- ողջ թոքի կամ դրա մի մասի անօդակրությունը
Դ- թոքային հյուսվածքի նեկրոզը

236. Կոմպրեսիոն ատելեկտազը տեղի է ունենում, երբ կա.
Ա- օտար մարմնով ասպիրացիա
Բ- էքսուդատիվ պլևրիտ
Գ- սուրֆակտանտի անբավարարությամբ
Դ- ինտերստիցիալ ֆիբրոզ

237. Լոբար թոքաբորբի դեպքում պլևրայի բորբոքման բնույթն է.
Ա- շճային
Բ- կրուպոզ
Գ- դիֆթերիտիկ
Դ- թարախային

238. Որոշեք բորբոքման բնույթը, եթե բրոնխոպնևմոնիան պայմանավորված է պնևմոկոկերով.
Ա- ֆիբրինային բորբոքում՝ մանրէային այտուցով բորբոքման օջախների ծայրամասի երկայնքով
Բ- հեմոռագիկ բորբոքում՝ բրոնխների և ալվեոլային պատերի նեկրոզով
Գ- շճաթարախային բորբոքում՝ գործընթացում ինտերստիցիայի ներգրավմամբ
Դ- ինտերստիցիային հյուսվածքում լիմֆոպլազմոցիտային ներսփռանքներ

239. Օջախային թոքաբորբով գործընթացը սկսվում է.
Ա- ինտերստիցիալ հյուսվածքից
Բ- ալվեոլներից

Գ- բրոնխներից
Դ- պլևրայից

240. Բլթային թոքաբորբը սկսվում է.
Ա- պլևրայից
Բ- բրոնխներից
Գ- ալվեոլաներից
Դ- ինտերստիցիալ հյուսվածքից

241. Սրտամկանի իշեմիկ դիստրոֆիայի դեպքում կարդիոմիոցիտներում հայտնաբերվում է.
Ա- կարիոլիզիս
Բ- ճարպային դիստրոֆիա
Գ- հիդրոպիկ դիստրոֆիա
Դ- գլիկոգենի անհետացում

242. Երկրորդային հիպերտոնիայի ամենատարածված պատճառն է.
Ա- Երիկամային հիվանդություն
Բ- ֆեոքրոմոցիտոմա
Գ- Աորտայի կոարկտացիա
Դ- Հղիություն

243. Սրտի իշեմիկ հիվանդության համար ճշմարիտ է.
Ա- Կայուն ստենոկարդիա առաջանում է կորոնար զարկերակների նեղացնող աթերոսկլերոզի դեպքում
Բ- Անկայուն ստենոկարդիան բնութագրվում է զարկերակների երկարատև սպազմով
Գ- Անոթների սպազմ կարող է առաջանալ NO-ի արտազատման ավելացման արդյունքում
Դ- Սուր կորոնար սինդրոմը սովորաբար առաջանում է կայուն վահանիկի հետևանքով

244. Սրտամկանի ինֆարկտի համար ճշմարիտ է.
Ա- առավել տարածված է 65 տարեկանից բարձր տարիքում
Բ- ավելի քիչ հավանական է կանանց մոտ՝ հետմենոպաուզային շրջանում էստրոգենի նվազման պատճառով
Գ- հիմնականում պայմանավորված է կորոնար զարկերակների թրոմբոէմբոլիայով
Դ- ավելի տարածված է տղամարդկանց մոտ, բացառությամբ 85 տարեկանից բարձր տարիքային խմբի

245. Չարորակ հիպերտոնիկ հիվանդության կլինիկան ներկայացված է հետևյալ նշաններով.
Ա- թոքի ինֆարկտ
Բ- լյարդային անբավարարություն
Գ- երիկամային սուր անբավարարություն
Դ- ստամոքսաղիքային արյունահոսություն

246. Ո՞ր տեսակի անոթներն են ախտահարվում աթերոսկլերոզի ժամանակ.
Ա- խոշոր երակներ
Բ- զարկերակիկներ
Գ- էլաստինային տիպի զարկերակներ
Դ- միկրոշրջանառու հունի անոթներ

247. Հնարավոր փոփոխությունները ներքին օրգաններում աորտայի աթերոսկլերոզի ժամանակ.
Ա- թոքային զարկերակի թրոմբոէմբոլիա
Բ- լյարդի գորշ ապաճ
Գ- սրտի գորշ ապաճ
Դ- աղիքի փտախտ

248. Սրտի իշեմիկ հիվանդությանը պատկանում է.
Ա- կարդիոմիոպաթիան
Բ- էքսուդատիվ միոկարդիտը
Գ- հետինֆարկտային կարդիոսկլերոզը
Դ- միոկարդի դիստրոֆիկ ախտահարումը

249. Երիկամների և փայծաղի ցիանոտիկ ինդուրացիան հետևանք է.
Ա- թրոմբոէմբոլիկ համախտանիշի
Բ- սուր սրտային անբավարարության
Գ- երկաթի դեֆիցիտային քրոնիկ անեմիայի
Դ- սրտի քրոնիկ անբավարարության

250. Սրտամկանի ինֆարկտից 4-6 շաբաթ անց սահմանազատման բորբոքման գոտու բաղադրիչ է՝
Ա- ֆիբրին
Բ- կոլագենային մանրաթելեր
Գ- լեյկոցիտային ինֆիլտրացիա
Դ- մակրոֆագային ինֆիլտրացիա

251. Աորտայի աթերոսկլերոտիկ անևրիզմայի առավել հաճախակի տեղակայումն է՝
Ա- աղեղ
Բ- կրծքային
Գ- որովայնային
Դ- վերել մաս

252. Սրտամկանի վնասման ամենատարածված ֆունկցիոնալ (կլինիկական և ձևաբանական) տեսակն է՝
Ա- ռեստրիկտիվ
Բ- լայնական (դիլատացիոն)
Գ- կորոնարոգեն
Դ- իդիոպաթիկ

253. Սրտի չափերը լայնական (դիլատացիոն) կարդիոմիոպաթիայի դեպքում՝
Ա- զգալի փոքրացած է
Բ- զգալի մեծացած է
Գ- փոփոխված չէ
Դ- փորոքները նեղացած են

254. Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի առաջատար մակրոսկոպիկ նշան է
Ա- ձախ փորոքի լայնացումը
Բ- աջ փորոքի հիպերտրոֆիան
Գ- ընտրովի նախասրտերի հիպերտրոֆիան
Դ- միջնապատի ասիմետրի հիպերտրոֆիան

255. Սրտի ռեստրիկտիվ (սահմանափակող) կարդիոմիոպաթիա է՝
Ա- Կավասակիի հիվանդություն
Բ- էնդոկարդիալ ֆիբրելաստոզ
Գ- Վեգենների գրանուլոմատոզ
Դ- ալերգիկ միոկարդիտ

256. Սահմանափակող (ռեստրիկտիվ) կարդիոմիոպաթիայի մորֆոլոգիական առանձնահատկություն է.
Ա- կավանման սրտամկան
Բ- սրտի փորոքները զգալիորեն մեծացել են
Գ- փորոքային խոռոչները լայնացած չեն
Դ- խայտաբղետ սրտամկան

257. Սրտի սուր անևրիզմը կարող է լինել հետևյալ վիճակի բարդություն.
Ա- սրտամկանի ինֆարկտ
Բ- հետինֆարկտային մակրոֆոկալ կարդիոսկլերոզ
Գ- կարդիոմիոպաթիա
Դ- էնդոկարդիտ

258. Սրտի սուր անևրիզմայի հնարավոր աղիքային բարդություն.
Ա- ֆիբրինային կոլիտ
Բ- թաց փտախտ
Գ- թափածակում
Դ- արյունահոսություն

259. Խոշորօջախային կարդիոսկլերոզի հյուսվածքաբանական բնութագիրն է՝
Ա- սպիի շուրջ կարդիոմիոցիտների վերականգնողական հիպերտրոֆիա
Բ- ստրոմայի լորձացում
Գ- կարդիոմիոցիտների ցրված ատրոֆիա
Դ- հատիկավոր շարակցական հյուսվածքի դաշտեր

260. Հետինֆարկտային սպին շրջապատող կարդիոմիոցիտները ի՞նչ վիճակում են գտնվում.

Ա- ատրոֆիա
Բ- ֆիբրինոիդ նեկրոզ
Գ- մետաստատիկ կրակալվածք
Դ- ռեգեներատիվ հիպերտրոֆիա

261. Սրտի քրոնիկական իշեմիկ հիվանդությունը ներառում է.
Ա- կրկնվող սրտամկանի ինֆարկտ
Բ- խոշոր օջախային կարդիոսկլերոզ
Գ- սրտի սուր անևրիզմա
Դ- քրոնիկ միոկարդիտ

262. Սրտամկանի տրանսմուրալ ինֆարկտի բնութագիր է .
Ա- նեկրոզի օջախը միայն պապիլյար մկաններում է
Բ- միայն ենթաէնդոկարդային տեղակայմամբ է
Գ- որպես բարդություն կարող է զարգանալ ներքին արյունահոսություն
Դ- բնորոշ են լիմֆոպլազմոցիտային ներսփռանքները

263. 50-Ամյա տղամարդու մոտ հանկարծակի առաջացել է կրծքավանդակի ենթակրծոսկրային ուժեղ ցավ, որը տարածվում է դեպի պարանոց: Ֆիզիկական քննությամբ չի ջերմում է, բայց ունի տախիկարդիա, հիպերվենտիլացիա և հիպոթենզիա: Սրտային աղմուկներ չեն լսվում: Շտապ կորոնարոգրաֆիան ցույց է տալիս ձախ շրջադարձ զարկերակի և առաջնային վայրէջ ճյուղի լուսանցքի 50%-70% խցանում թրոմբային զանգվածներով: Հետևյալ բարդություններից որի՞զարգացումն է հավանական մոտակա 1 ժամվա ընթացքում:
Ա- Փորոքային ֆիբրիլացիա
Բ- Սրտամկանի պատռվածք
Գ- Փորոքային անևրիզմա
Դ- Թրոմբոէմբոլիզմ

264. Անցած մեկ տարվա ընթացքում 34-ամյա կինն ունեցել է սրտխփոց, հոգնածություն և կրծքավանդակի ուժեղացող ցավ: Ֆիզիկական քննությամբ հայտնաբերվել է, որ նա չի ջերմում, պուլսը 75զարկ/րոպե է, շնչառությունը՝ 15/րոպե, իսկ արյան ճնշումը՝ 110/70 մմսս: Սրտի աուսկուլտացիան հայտնաբերել է սիստոլիկ աղմուկ: Ըստ հիվանդության պատմության հիվանդը ամսական ունենում է մեկ կամ երկու նոպաներ: Էխոսրտագրությունը առավել հավանականությամբ ո՞րը ցույց կտա ստորև նշվածներից:
Ա- Աորտայի փականի անբավարարություն
Բ- Միտրալ փականի պրոլապս
Գ- Թոքային ստենոզ
Դ- Տրիկուսպիդային փականի ռեգուրգիտացիա

265. Սրտամկանի ինֆարկտի մանրադիտակային հետազոտությամբ հայտնաբերվում են անոթներով և բջջային տարրերով հարուստ հատիկավոր հյուսվածք, որոնց թվում կան բազմաթիվ ֆիբրոբլաստներ: Սրտամկանի ինֆարկտի ո՞ր փուլն է:

Ա- նեկրոզի
Բ- ռեպարացիայի
Գ- հատիկավորման
Դ- օրգանիզացիայի

266. Սրտամկանի ինֆարկտից մահացածի դիահերձման ժամանակ պերիկարդի խոռոչում հայտնաբերվել են հեղուկ արյուն և թրոմբներ: Դա հետևանք է.
Ա- փորոքների ֆիբրիլացիայի
Բ- կորոնար զարկերակի պատռվածք
Գ- սրտի պատռվածքի
Դ- կարդիոգեն շոկի

267. Մահվան հնարավոր պատճառը սրտի քրոնիկական անևրիզմայի դեպքում.
Ա- գլխուղեղի իշեմիկ ինֆարկտ
Բ- ստամոքս-աղիքային արյունահոսություն
Գ- թոքերի գորշ ինդուրացիա
Դ- սուր սրտային անբավարարություն

268. Սրտամկանի ինֆարկտի դեպքում սրտային անբավարարությունն օրգաններում արտահայտվում է.
Ա- քրոնիկ երակային գերարյունությամբ
Բ- սուր երակային գերարյունությամբ
Գ- ցիանոտիկ ինդուրացիա
Դ- ատրոֆիա

269. Սրտամկանի ենթաէնդոկարդային տեղակայումով ինֆարկտի դեպքում էնդոկարդի վրա կարող է զարգանալ.
Ա- ֆիբրինային նստվածքներ
Բ- թրոմբոցային զանգվածներ
Գ- պետրիֆիկատներ
Դ- մանր պատռվածքներ

270. Սրտի քրոնիկական անբավարարությունից մահացածի դիահերձման ժամանակ հայտնաբերվել է սրտի մեծացում: Ձախ փորոքի պատը գագաթային հատվածում հյուծված է, խիտ, սպիտակավուն և արտափքված: Դա՝
Ա- սրտի սուր անևրիզմա է
Բ- ցրված կարդիոսկլերոզ
Գ- կրկնվող սրտամկանի ինֆարկտ
Դ- սրտի քրոնիկ անևրիզմա է

271. Աթերոսկլերոզի և հիպերտոնիայի սրտային ձևն է.
Ա- միոկարդիտը
Բ- կարդիոսկլերոզը
Գ- իշեմիկ հիվանդությունը

Դ- Մենկեբերգի հիվանդությունը

272. Ստորև նշվածներից ո՞րն է ռևմատիկ միոկարդիտի տարատեսակ.
Ա- Հետադարձ գորտնուկավոր
Բ- Օջախային միջանկյալ էքսուդատիվ
Գ- Սուր գորտնուկավոր
Դ- Ֆիբրոպլաստիկ

273. Ստորև նշվածներից ընտրել ռևմատիկ դիֆուզ մակերեսային վալվուլիտին բնորոշ ձևաբանական արտահայտությունը.
Ա- Պոլիպների տեսքով ընդարձակ թրոմբային զանգվածներ փականի մակերեսին
Բ- Միտրալ փականի մուկոիդ ուռճեցում
Գ- Գորտնուկների տեսքով թրոմբային վրադրումներ փականների եզրերին
Դ- Փականների փեղկերի հաստացում, սկլերոզ, հիալինոզ

274. Ներքոհիշյալներից ընտրել ռևմատիկ ֆիբրոպլաստիկ վալվուլիտին բնորոշ ձևաբանական արտահայտություն.
Ա- Միտրալ փականի բնածին արատ
Բ- Ձևախախտված փականում ֆիբրինոիդ մեռուկ
Գ- Միտրալ փականի ֆիբրոզ
Դ- Միտրալ փականի մուկոիդ ուռճեցում

275. Ընտրել ռևմատոիդ արթրիտին բնորոշ նշանը.
Ա- հանգույցների առաջացում միոկարդում
Բ- Լիբման–Սաքսի աբակտերիային էնդոկարդիտ
Գ- Մանր հոդերի սիմետրիկ ախտահարում՝ ուղեկցված ձևախախտումով
Դ- Դեմքի մաշկին թիթեռնիկի տեսքով կարմրություն

276. Ինչպե՞ս է կոչվում էնդոկարդիտը համակարգային կարմիր գայլախտի ժամանակ:
Ա- Հետադարձ գորտնուկավոր
Բ- Դիֆուզ մակերեսային վալվուլիտ
Գ- Ֆիբրոպլաստիկ
Դ- Աբակտերիալ գորտնուկավոր

277. Նշված դրույթներից ո՞րն է ճշմարիտ համակարգային կարմիր գայլախտի դեպքում:
Ա- Հատկանշական է կարծրամաշկությունը
Բ- Պաթոգենեզում կարևոր են հակաստրեպտոկոկային հակամարմինների ազդեցությունը և խաչաձև ռեակցիաները
Գ- Առավելապես տարեց տղամարդկանց հիվանդություն է
Դ- Ախտահարվում են մաշկը, անոթներն ու երիկամները

278. Նշված դրույթներից ո՞րն է ճշմարիտ համակարգային կարմիր գայլախտի դեպքում երիկամների ախտահարմանը:
Ա- Երիկամների ախտահարումը միակողմանի է

Բ- Գայլախտային նեֆրիտի դեպքում ախտահարվում են միայն երիկամի ոլորուն խողովակները
Գ- Գայլախտային նեֆրիտի դեպքում ախտահարվում են միայն երիկամի հավաքիր խողովակները
Դ- Երիկամների կծիկների մազանոթային հիմային թաղանթները հաստացած են մետաղալարի գալարների տեսքով

279. Ստորև նշվածներից ընտրել Կուսմաուլ-Մայերի հիվանդությանը (հանգուցավոր պերիարտերիտ) բնորոշ դրույթը:
Ա- Իմուն կոմպլեքսները ֆիքսվում են երիկամների կծիկների հիմային թաղանթներում
Բ- Բնորոշ հատկանիշներից է Աշոֆի գրանուլեմաների ձևավորումը
Գ- Սրտում զարգանում է Լիբման-Սաքսի էնդոկարդիտ
Դ- Ախտածագման գործընթացում առաջատար է էֆեկտոր-բջջային մեխանիզմը

280. Ստորև նշվածներից ընտրել համակարգային սկլերոդերմիային բնորոշ դրույթը:
Ա- Ախտածագման գործընթացում էական դեր ունեն հակա-IgG հակամարմինները
Բ- Ախտաբանական գործընթացում առանձնահատուկ են Աշոֆի գրանուլեմաները
Գ- Հիվանդության զարգացման գործընթացում նշանակություն ունի անկանոն նեոֆիբրիլոգենեզը
Դ- Ախտածագման գործընթացում էական դեր ունեն հակակորիզային հակամարմինները

281. Ստորև նշված դրույթներից որոնք են բնութագրում հանգուցավոր պերիարտերիտը:
Ա- Բնորոշ ախտահարումն է աորտոարտերիտը
Բ- Զարկերակիկի պատում զարգանում է ֆիբրինոիդ մեռուկ
Գ- Առավելապես պրոլիֆերացիայի է ենթարկվում անոթների էնդոթելը
Դ- Բնորոշ է դեստրուկտիվ-պրոդուկտիվ ֆլեբիտը

282. Դերմատոմիոզիտին բնորոշ են
Ա- գրանուլեմատոզ բորբոքման օջախների առկայություն ենթամաշկային բջջանքում
Բ- մկանների և մաշկի համակարգային ախտահարում
Գ- բորբոքային ինֆիլտրատներում գերակշռում են նեյտրոֆիլները
Դ- հանդիպում է բացառապես մանկական տարիքում

283. Սրտի միտրալ ռևմատիկ արատի դեպքում թոքային շրջանառության մեջ քրոնիկ երակային գերարյունությունը ուղեկցվում է.
Ա- այտուցով
Բ- էմֆիզեմայով
Գ- թոքերի գորշ ինդուրացիայով
Դ- ատելեկտազով

284. Բոլոր ներկայացված տուբերկուլոզային օջախների նկարագրերը ըստ հեղինակների ճիշտ են, բացառությամբ՝

Ա- Հոնի օջախ՝ երկրորդային տուբերկուլոզի ապաքինված օջախ է
Բ- Աբրիկոսովի օջախ՝ կազեոզ բրոնխոթոքաբորբի օջախ է երկրորդային տուբերկուլոզի ժամանակ
Գ- Աշոֆ-Փուլի օջախ՝ Աբրիկոսովի ապաքինված օջախ է
Դ- Սիմոնի օջախ՝ թոքի գագաթում առաջնային տուբերկուլոզի ցրման օջախ

285. Երկրորդային տուբերկուլոզի ձևերից են.
Ա- ինֆիլտրատիվ տուբերկուլոզը
Բ- սուր միլիար տուբերկուլոզը
Գ- սրագույն տուբերկուլոզային սեպսիսը
Դ- քրոնիկական հեմատոգեն խոշոր օջախային տուբերկուլոզը

286. Առաջնային տուբերկուլոզի բնութագրերը ճիշտ են, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- ներկայացված է կազեոզ թոքաբորբով/աֆեկտ/, լիմֆանգիտով և լիմֆադենիտով
Բ- բնորոշ տեղակայումը՝ երիկամներ, ոսկրեր, թոքեր
Գ- բնորոշ տեղակայումը՝ թոքեր, աղիներ
Դ- գերակշռող հյուսվածքային ռեակցիաները՝ էքսուդատիվ և մեռուկային

287. Ընտրեք բարակ աղու լորձաթաղանթի փոփոխությունները որովայնային տիֆի ժամանակ հիվանդության առաջին շաբաթվա ընթացքում ՝
Ա- դիֆտերիտիկ էնտերիտ
Բ- ֆլեգմոնոզ էնտերիտ
Գ- կատարալ էնտերիտ
Դ- գրանուլեմատոզ էնտերիտ

288. Թվարկված հիվանդություններից որի համար է դասական ընթացքի կամ բարդությունների ժամանակ բնորոշ ֆիբրինոզ կոլիտը՝
Ա- սալմոնելոզ
Բ- դիզենտերիա
Գ- ամեոբիազ
Դ- խոլերա

289. Երկու տարեկան տղայի մոտ վիրուսային ռեսպիրատոր վարակից հետո ի հայտ են եկել այտուցներ, հայտնաբերվել են զգալի ալբումինուրիա, հիպոպրոտեինեմիա, հիպերլիպիդեմիա: Փոփոխությունները անհետացան կորտիկոստերոիդների կիրառումից հետո: Ընտրեք հավանական ախտորոշումը՝
Ա- նվազագույն փոփոխություններ
Բ- թաղանթային նեֆրոպաթիա
Գ- սուր գլոմերուլոնեֆրիտ
Դ- ֆոկալ սեգմենտար կծիկային հիալինոզ

290. Ընտրեք ճիշտ դրույթը: Դիակը դիահերձարան է տեղափոխվում մահվանից՝
Ա- 2 ժամ անց
Բ- 3 ժամ անց

Գ- 1 ժամ անց
Դ- անմիջապես

291. Տնային մահերի դեպքում դիակը դիահերձարան է տեղափոխվում՝
Ա- Ինքնահոսով
Բ- Ցանկացած դիատար մեքենայով
Գ- Շտապ Օգնության ծառայության դիատար մեքենայով
Դ- Շտապ Օգնության ծառայության մեքենայով

292. Դիահերձմանը կարող են մասնակցել.
Ա- Դիահերձող բժիշկը, հարազատները
Բ- Դիահերձող բժիշկը, բուժող բժիշկը
Գ- Դիահերձող բժիշկը, հարազատները, բուժող բժիշկը
Դ- Դիահերձող բժիշկը և ցանկացած անձ

293. Դիահերձման արձանագրության օրինակելի ձևը հաստատում է՝
Ա- Ախտաբանաանատոմը
Բ- Ծառայության ղեկավարը
Գ- Պետական կառավարման լիազոր մարմինը
Դ- Բուժհաստատության տնօրենը

294. Դիահերձումից հետո վերցված թաց արխիվը պահպանվում է՝
Ա- 1 տարով
Բ- 3 տարով
Գ- 5 տարով
Դ- ըստ ցանկության

295. Վերջնական ախտաբանաանատոմիական ախտորոշման ձևակերպման ժամկետն է առավելագույնը՝
Ա- 3 ամիս
Բ- մինչև սույն տարվա վերջ
Գ- 1 ամիս
Դ- 3 շաբաթ

296. Կարո՞ղ են մահացածի հարազատները ծանոթանալ ախտաբանաանատոմիական ախտորոշմանը՝
Ա- Այո
Բ- Ոչ
Գ- Այո, միայն դատարանի որոշման հիման վրա
Դ- Այո, միայն բուժհաստատության տնօրենի ցուցումով

297. Հիվանդանոցային մահերի դեպքում դիահերձող բժիշկը կարող է արդյոք պահանջել հիվանդության պատմագիրը՝
Ա- Հիվանդության պատմագիրը պարտադիր է
Բ- Ոչ, կարող է բավարարվել հիվանդության էպիկրիզով

Գ- Ոչ, կարող է բավարարվել ուղեգրով
Դ- Ոչ, կարող է բավարարվել բուժող բժշկի բանավոր խոսքով

298. Նշվածները համարվում են վտանգավոր բժշկական թափոններ, բացառությամբ՝
Ա- Սրածայր թափոն
Բ- Ախտաբանաանատոմիական թափոն
Գ- Կեղտաջուր
Դ- Վիրաբուժական թափոններ

299. Ախտաբանաանատոմիական թափոնները հավաքվում են, պահվում են սառնարանում առավելագույնը՝
Ա- Ոչ ավել 48 ժամ
Բ- Ոչ ավել 24 ժամ
Գ- 1 ամիս
Դ- 1 տարի

300. Միկրոկենսաբանական թափոնները վնասազերծվում են՝
Ա- Նիկաքլոր լուծույթով
Բ- քլորակիրով
Գ- Թմբուկով ավտոկլավում 1.1 մթն. Ճնշումով, 1210C
Դ- Հրկիզվում են

301. Հեղուկ կենսաբանական թափոնները տեղում վնասազերծվում են ՝
Ա- Քլորակիրով 1:5 հարաբերությամբ
Բ- Սպիրտով 1:2 հարաբերությամբ
Գ- Ֆորմալինով 1:3 հարաբերությամբ
Դ- Սպիրտով 1:10 հարաբերությամբ

302. Վարակիչ թափոնների գունային կոդավորումն է՝
Ա- Դեղին կամ կարմիր գույնը
Բ- Սև գույնը
Գ- Շագանակագույնը
Դ- Կանաչ գույնը

303. Մարդու պապիլոմավիրուսի (ՄՊՎ) ո՞ր սերոտիպերն են 2/3 դեպքերում առաջացնում արգանդի պարանոցի քաղցկեղ.
Ա- 6 և 11
Բ- 16 և 18
Գ- 31 և 33
Դ- 35 և 39

304. Տարեց տղամարդն ունի փափուկ, կլորվուն ենթամաշկային գոյացություն պարանոցի հետին մակերեսին կենտրոնական կետի առկայությամբ: Ո՞րն է հավանական ախտորոշումը.
Ա- Անգիոսարկոմա

Բ- Էպիդերմոիդ կիստա
Գ- Լիմֆադենիտ
Դ- Պիլար կիստա

305. Ստորև թվարկված նշաններից և ախտանիշներից որո՞նք են հաճախ հանդիպում մինիմալ փոփոխությունների հիվանդության դեպքում.
Ա- Ազոտեմիա
Բ- Հիպերտենզիա
Գ- Մակրոհեմատուրիա
Դ- Ընտրողական սպիտամիզություն

306. Ստորև նշվածներից որոնք են Շնիցլերյան մետաստազները ստամոքսի քաղցկեղի դեպքում:
Ա- մետաստազները թոքերում
Բ- մետաստազները ձվարաններում
Գ- մետաստազները վերանրակային ավշային հանգույցներում
Դ- մետաստազները հարուղիղաղիքային բջջանքի ավշային հանգույցներում

307. Նշվածներից բոլորը հանդիսանում են ստամոքսի խոցի բարդություն, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- պերֆորացիա
Բ- պենետրացիա
Գ- մալիգնիզացիա
Դ- էնտերոլիզացիա

308. Ստորև նշված մորֆոլոգիական փոփոխություններից որն է առավել բնորոշ Կրոնի հիվանդությանը.
Ա- բարակ աղու լորձաթաղանթում կրիպտ աբսցեսների առկայությունը
Բ- բարակ աղու լորձաթաղանթում սարկոիդոզանման գրանուլեմաների առկայությունը
Գ- բարակ աղու լորձաթաղանթի թավիկների սնկանման դեֆորմացիան
Դ- բարակ աղու լորձաթաղանթում լիմֆոիդ ֆոլիկուլների հիպերպլազիան

309. Բորբոքման թվարկված մորֆոլոգիական ձևերը բնորոշ են դեստրուկտիվ ապենդիցիտի համար, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- Ֆլեգմոնոզ
Բ- Մակերեսային
Գ- Գանգրենոզ
Դ- Ապոստեմատոզ

310. Որտե՞ղ են առաջին հերթին առավելապես զարգանում տեղային փոփոխությունները որովայնային տիֆի դեպքում.
Ա- 12-մատնյա աղիքում
Բ- ուղիղ աղիքում
Գ- զստաղիքի տերմինալ հատվածում

Դ- մեզենտերիալ լիմֆատիկ հանգույցներում

311. Ամեոբային դիզենտերայի դեպքում առավելապես ախտահարվում է՝
Ա- զստաղիքը
Բ- կույր և վերել աղիքները
Գ- 12-մատնյա աղիքը
Դ- փայծաղը

312. Նշել որովայնային տիֆի դեպքում աղիքի ամենահաճախ ախտահարվող հատվածը՝
Ա- զստաղիք
Բ- ինտրամուրալ նյարդային գանգլիոններ
Գ- սիգմայաձև աղիք
Դ- լայնական հաստ աղիք

313. 25 Տարեկան տղամարդը գանգատվում էր գլխացավերից վերջին 5 ամիսների ընթացքում: Ընտանիքի անդամները նկատել էին, որ նա էմոցիոնալ ավելի լաբիլ էր և դժվար էր կենտրոնանում, նաև ունեցել էր ցնցումներ: Սակայն ֆիզիկական զննմամբ տեսողական նյարդի պտկիկի այտուց, շարժողական խանգարումներ չէին հայտնաբերվել: ԿՏ հետազոտությամբ հայտնաբերվել էր 2,0սմ մասսա աջ ճակատային շրջանում: Բիոպսիոն հետազոտությամբ հայտնաբերվել էր տարբեր տրամաչափերի անոթային ոլորուն ցանց՝ հարակից գլիոզով: Առավել հավանական ախտորոշումն է.
Ա- արտերիովենոզ մալֆորմացիա
Բ- օրգանիզացվող աբսցես
Գ- անգիոսարկոմա
Դ- պատռված պարկաձև անևրիզմա

314. 20 Տարեկան առողջ մարդը թույլ արտահայտված ֆարինգիտով, որին մի քանի օր անց հետևել են հանկարծ առաջացած սուր գլխացավերը: Ֆիզիկական զննությամբ հայտնաբերվել էր ծոծրակային կարկամություն, 38,8°C ջերմության բարձրացում, պուլսը՝ 98 վրկ., շնչառության հաճախությունը՝ 26 վրկ., զարկերակային արյան ճնշումը՝ 95/45մմ սնդ. սյուն: Մակրոսկոպիկ փափուկ ուղեղաթաղանթը խամրած էր, ծածկված դեղնականաչավուն թարախային էքսուդատով: Ստորև նշվածներից ո՞րը կարող է հայտնաբերվել.
Ա- Cryptococcus neoformans
Բ- Mycobacterium tuberculosis
Գ- Toxoplasma gondii
Դ- Neisseria meningitidis

315. 45 Տարեկան նախկինում առողջ տղամարդը ուներ գլխացավեր վերջին ամսվա ընթացքում: Ֆիզիկական զննման տվյալներով նշանակալի տվյալներ չէին հայտնաբերվել: Գլխուղեղային անգիոգրամման ցույց էր տվել 7մմ պարկաձև անևրիզմա աջ միջին ուղեղային զարկերակի ավազանում: Ստորև նշվածներից ո՞րը կառաջանա նկարագրված ախտաբանության ժամանակ:

Ա- էպիդուրալ հեմատոմա
Բ- սուբարախնոիդալ արյունազեղում
Գ- սուբդուրալ հեմատոմա
Դ- հիդրոցեֆալիա

316. 18 Տարեկան ուսանողուհին վերջին 6 ամիսների ընթացքում ուներ տեսողության վատացում: Ֆիզիկական զննումով առկա էր աջակողմյան պտկիկային այտուց: Վերջույթների շրջանում ուներ 14 ցրված 2-5 սմ տափակ, հիպերպիգմենտավորված մաշկային ախտահարումներ, անկանոն եզրերով: Գլխուղեղի ԿՏ հետազոտությամբ ներգանգային հեմատոմա չէր հայտնաբերվել, սակայն առկա էր աջ տեսանյարդի գոյացություն: Տեսանյարդի գլիոման հեռացվել էր: 8 ամիս անց հերթական ստուգումների ժամանակ շոշափվել էր գոյացություն աջ դաստակի շրջանում:
Ա- շվաննոմա
Բ- լիպոմա
Գ- ֆիբրոսարկոմա
Դ- մենինգիոմա

317. Բրոնխոէկտատիկ հիվանդության բարդությունները ներառում են.
Ա- Ամիլոիդոզ
Բ- Թոքային սիրտ
Գ- Թոքերի թարախակույտ
Դ- Վերը նշված բոլորը

318. Հիպերտրոֆիկ կարդիոմիոպաթիայի հիմնական բարդություն է
Ա- կարդիոգեն շոկ
Բ- սրտամկանի պատռվածք
Գ- սրտի սուր անևրիզմա
Դ- մահացու առիթմիաներ

319. Հյուսվածաբանական լաբորատորիայում.
Ա- պրեպարատները, պարաֆինային բլոկները և թաց արխիվը պահվում են 3-5 տարի
Բ- պրեպարատները, պարաֆինային բլոկները և թաց արխիվը պահվում է 7 տարի
Գ- պրեպարատները, պարաֆինային բլոկները և թաց արխիվը չեն տրամադրվում լրացուցիչ հետազոտության կամ կոնսուլտացիայի համար
Դ- պրեպարատները, պարաֆինային բլոկները և թաց արխիվը կարող են տրամադրվել լրացուցիչ հետազոտության կամ կոնսուլտացիայի համար

320. Ընկերքային արյան շրջանառության սուր խանգարումներն են բոլոր նշվածները բացառությամբ՝
Ա- ընկերքի ինֆարկտ և այտուց
Բ- միջթարթիչային տարածության թրոմբող
Գ- տարածուն իշեմիա
Դ- ընկերքի ախտաբանական անհասություն

321. Նշվածներից որ քաշի դեպքում է ընկերքը համարվում չափազանց խոշոր ՝
Ա- 550-800 գրամ
Բ- 400-500
Գ- 1000-1500
Դ- 800-1000

322. Պտղի անտենատալ մահվան ժամանակ որ օրգանում է առավել վաղ սկսվում ինքնալուծումը՝
Ա- Գլխուղեղ
Բ- Մկաններ
Գ- Երիկամներ
Դ- Ենթաստամոքսային գեղձ

323. Պորտալարի երկարությունը հասուն 34-42 շաբաթական երևեխայի մոտ հավասար է՝
Ա- 40-50 սմ
Բ- 25-50 սմ
Գ- 50-60 սմ
Դ- 30-40 սմ

324. Պտղի սուր ասֆիքսիայի նշաններն են բոլորը, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- Մուգ հեղուկ արյունը սրտի խոռոչներում
Բ- Հեմոռագիկ մեռուկներ մակերիկամներում
Գ- Պտղի մացեռացիա
Դ- Սուբարախնոիդալ արյունազեղում

325. Ծննդաբերական վնասվածք են համարվում նշվածներից բոլորը, բացառությամբ՝
Ա- կեֆալոհեմատոմա
Բ- ծննդաբերական ուռուցք
Գ- ընկերքի վաղաժամ շերտազատում
Դ- էպիդուրալ հեմատոմա

326. Որ բնածին հիվանդությանն է համապատասխանում ենթաստամոքսագեղձի ձևաբանական նբկարագիրը.միջբլթակային և ներբլթակային ծորանները լայնացած են, պատված են հարթեցված խորանարդաձև և բարձր պրիզմայաձև էպիթելով, լուսանցքներում առկ է թանձր հոմոգեն էոզինոֆիլային զանգված՝
Ա- բնածին շաքարային դիաբետ
Բ- բնածին պանկրեատիտ
Գ- մուկովիսցիդոզ
Դ- պանկրեանեկրոզ

327. Բնածին իմունոդեֆիցիտային համախտանիշով ծնված երեխաների մոտ ուրցագեղձը կարող է ենթարկված լինել հետևյալ կազմափոխմանը, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
Ա- թիմոմեգալիա
Բ- դիսպլազիա
Գ- տարիքային ինվոլյուցիա
Դ- հիպոպլազիա

328. Գտեք նկարագրին համապատասխան ախտորոշումը. մեծ կիսագնդերում ակոսների, գանգի կամարի և փափուկ հյուսվածքների բացակայություն՝
Ա- Էկզէնցեֆալիա
Բ- Անէնցեֆալիա
Գ- Ինիոնցեֆալիա
Դ- Պոռէնցեֆալիա

329. Գլխուղեղի մեծ կիսագնդերում ակոսների, գալարների և շերտերի տարբերակման բացակայությունը դա՝
Ա- Էկզէնցեֆալիան է
Բ- Անէնցեֆալիան է
Գ- Ինիոնցեֆալիան է
Դ- Պորէնցեֆալիան է

330. ՀՀ Կառավարության որ որոշումն է կարգավորում Ախտաբանաանատոմիական դիահերձումների իրականացումը.
Ա- 23.08.2012 N 1082
Բ- 11.08.2011 N 1156-Ն
Գ- 08.04.2021 N 519-Ն
Դ- 04.03.2021 N 288-Նի

331. ՀՀ Կառավարության որ որոշումն է կարգավորում Ձևաբանական հետազոտությունների ցանկը և անցկացման կարգը՝
Ա- 23.08.2012 N 1082
Բ- 11.08.2011 N 1156-Ն
Գ- 08.04.2021 N 519-Ն
Դ- 04.03.2021 N 288-Ն

332. Ձևաբանական հետազոտության արխիվացումը կատարվում է հետևյալ ձևով՝
Ա- Ապակիները , պարաֆինային բլոկերը և թաց արխիվը պահվում են 3 տարի
Բ- Ապակիները , պարաֆինային բլոկերը պահվում են 3 տարի, թաց արխիվը 2 տարի
Գ- Ապակիները , պարաֆինային բլոկերը պահվում են 1 տարի, իսկ թաց արխիվը ՝ 5 տարի
Դ- Ապակիները , պարաֆինային բլոկերը պահվում են 5 տարի, իսկ թաց արխիվը 1 տարի

333. Բջջաբանական հետազոտության ապակիները պահվում են՝
Ա- 2 տարի
Բ- 3 տարի
Գ- 1 տարի
Դ- 6 ամիս

Սկզբնաղբյուրներ՝

Патологическая анатомия (под редакцией профессора В. С. Паукова) 2015

Двухтомник «Патологическая анатомия» (авторы: академик РАН М. А. Пальцев, Н. М. Аничков и соавторы) —2000

Robbins & Cotran Pathologic Basis of Disease 10th Edition 2015

Ն.Դ. Վարդազարյան Պաթոլոգիական անատոմիա 2012

Патологическая анатомия, учебник, Струков А.И., Серов В.В., Пауков В.С., 2015